

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ
ՅԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. Վ. ԿՈՃԵՎՆԻԿՈՎ

ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ
ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄԸ
ՅԵՎ
ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԽՄԲՆԳՐՈՒԹՅԱՄԲ

347

Կ-63

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

347

4-63

և

Մ. Վ. ԿՈՃԵՎՆԻԿՈՎ

ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ
ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄԸ
ՅԵՎ
ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Ի. Տ. ԳՈՒՅԱԿՈՎԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

վերջին ժամանակները դատական որդանները համարվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակախների նոր կազմերով, վորոնք զեռես թավարար չափով ծանոթ չեն խորհրդային որենագրութանն ու չունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փորձ: Այդ ընկերներին ողնություն և պետք, վորպետղի նրանք արագ կերպով կարողանան ակրապետել զործին, ընդդրկեն դատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ զրված խնդրներում:

«ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի զրադարան»-ի լույսընծայումը զզալի չափով կլրացնի արզարադատության մարմինների իրավարանական հանրամատչելի զրակնության բացը և էյակիան ոժանդակություն ցույց կտա ժողովրդական դատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց զործնական աշխատանքում:

Գրադարանը թողկացած և քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին նվիրված մի շարք զրքերից:

Իրավարանական հրատարակչությունը խնդրում և ընթերցողներին լույս ընծայող զրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու դիտողություններն ուղարկել հրատարակչությանը:



2638
40

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԳԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊՐՈՅԵՍԻ

Քրեական զործերի մեծ մասը մեղ մոտ քննում են ժողովրդական դատարանները: Միայն մի քանի կատեգորիայի զործեր քննում են մարզային (յերկրային) և գերագույն դատարանները կամ հատուկ դատարանները՝ զխնվորական տրիբունալները, տրանսպորտային դատարանները: Վորոչելու համար, թե վոր դատարանին և ընդգատյա այս կամ այն զործը, որենքով սահմանված են ընդգատության կանոններ:

Բոլոր դատարանների դատավճիռները, բացի միութենական հանրապետության Գերագույն Դատարանի և ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի արձակած դատավճիռներից, կարող են դանդատարկվել դատապարտյալի կողմից և բողոքարկվել դատախազի կողմից:

Ինչո՞ւ համար զոյություն ունի այդպիսի դանդատարկում և բողոքարկում, ինչո՞ւմն և նրանց նշանակությունը, դրա համար ի՞նչ կարգ և սահմանված, ի՞նչ զործողություններ պետք և կատարի այն դատարանը, վորի դատավճուի վերաբերմամբ դանդատ կամ բողոք և ստացվել, և այն վերադաս դատարանը, վորը քննում և այդ դանդատը կամ բողոքը—այդ բոլորի մասին չարադրված և այս բողոքների մեջ:

Խորհրդային դատարանը կառուցված և ամենադեմոկրատական հիմունքների վրա: ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության մասին որենքի համաձայն, ժողովրդական դատարանները

պետք է ընտրվեն ամբողջ ժողովրդի կողմից ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրութիւնների հիման վրա՝ դադանի քվեարկութեամբ: Յուրաքանչյուր գործի քննութիւն տեղի յէ ունենում յերկու ժողովրդական ատենակալների մասնակցութեամբ, վորոնք դատարան են գալիս Փարբիկայից, գործարանից, կոլտնտեսութիւններից, գիտական և պետական այլ հիմնարկութիւններից:

Դատարանի կողմից քննութեան առնուող ամեն մի գործ լուծումն և ստանում գործում յեղած բոլոր նյութերը՝ դատավորների կողմից ամենայն հոգաւորութեամբ ուսումնասիրելուց հետո՝ նրանց սոցիալիստական իրավագիտակցութեան և ներքին համոզմունքի հիման վրա՝ դատավորներ, վորոնք անկախ են և միայն որենքին են յենթարկվում: Խորհրդային դատարանն ի հակադրութիւն շահագործողական պետութիւնների դատարանի, շահագրգռված է նրանում, վորպէսզի անմեղ մարդ չդատապարտվի:

Սակայն դատարանի աշխատանքում կարող են լինել զանազան տեսակի սխալներ, վորոնց հետեանքով և կարող է սխալ դատավճիռ կայացվել. այսպէս՝ դատարանը կարող է անբավարար չափով ստուգել նախաքննութեան միջոցին հավաքված նյութերը, կարող է սխալ գնահատութեան յենթարկել այդ նյութերը, գործերի քննութեան ժամանակ խախտել այս կամ այն պրոցեսուալ որենքը և դրանով սեղմել գործին մասնակցող կողմերի որինական իրավունքները, խախտել քրեական-նյութական որենքները, ամյալ գործով կիրառել այն որենքը, վորն այդ դեպքին չի վերաբերում, կամ չկիրառել այն որենքը, վորը պետք է վոր կիրառվեր և այլն և այլն: Այդպիսի ամեն մի սխալ անխուսափելիորեն անդրադառնում է դատավճռի վրա, դարձնում է այն սխալ, արատավոր և խարխլում է այն համոզելի հատկութիւնը, վոր պետք է պարունակի իր մեջ խորհրդային դատարանի կողմից կայացված ամեն մի դատավճիռ: Ահա այդպիսի սխալներն ուղղելու համար է, վոր խորհրդային քրեական պրոցեսի մեջ գոյութիւն ունի դատավճիռների գանգատարկումը և բողոքարկումը:

Դատարանների դատավճիռների վերաբերյալ զանգատներն ու բողոքները քննող վերադաս դատարանը ստուգում է՝ ճիշտ է կիրառված արդյոք դատարանի կողմից որենքը և հիմնավորված է արդյոք դատավճիռը, և ուսումնասիրելով գործերը, հսկողութիւն է իրականացնում ստորադաս դատարանների գործունեութեան վրա:

1. ԳՍՏՍՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԵՏ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՄԲՈՆՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Ստալինյան Սահմանադրութիւնը խորհրդային ամեն մի քաղաքացու պարտավորեցնում է ճշտորեն պահպանել սոցիալիստական որինականութիւնը: Սահմանադրութեան 130 հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Սահմանադրութիւնը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահութիւն պահպանել, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցութեան կանոնները»:

Կուսակցութիւնը և խորհրդային պետութեան կառավարութիւնը սոցիալիստական շինարարութեան բոլոր ետապներում բացառիկ նշանակութիւն են տվել, և տալիս են, սոցիալիստական որինականութիւնը ճշտորեն պահպանելու հարցին:

1918 թվին Խորհուրդների Համառուսական V Արտակարգ Համագումարը վորոշում կայացրեց որենքների ճշտորեն պահպանութեան մասին, հանգամանորեն նչելով, վոր որենքների ճիշտ կերպով պահպանելն անհրաժեշտ է բանվորների և դյուղացիների իշխանութեան հետագա դարգացման ու ամրապնդման համար Ռուսաստանում (տես Որ. Ժող. 1918 թ. № 90):

Բանվորական և Դյուղացիական Պաշտպանութեան Խորհուրդը նույն թվի դեկտեմբերի 8-ի վորոշմամբ (Որենքների Ժող. 1918 թ. № 93) պարտավորեցրեց մարդային ու տեղական խորհրդային հիմնարկութիւններին՝ ճշտորեն և անառկելիորեն կատարելու կենտրոնական

իշխանութեան վորոշումներն ու կարգադրութիւնները, իսկ այդ վորոշումները խախտելու մեջ մեղավոր անձերին, առանց նրանց պաշտոնական գիրքին և կուսակցական պատկանելութեանը նայելու, պատասխանատւութեան յենթարկելէ հեղափոխական որենքների ամբողջ խտութեամբ:

1919 թ. Կոլչակի դեմ տարած հաղթանակի կապակցութեամբ բանվորներին և գյուղացիներին ուղղած իր նամակում Վ. Ի. Լենինը գրում էր. «Վորպեսզի Կոլչակին և Դենիկինին մինչև վերջը վոչնչացնենք, անհրաժեշտ է պահպանել խտազույն հեղափոխական կարգ, անհրաժեշտ է սրբութեամբ պահպանել Խորհրդային իշխանութեան որենքները և հրամանագրերը և հետևել նրանց կատարմանը բոլորի կողմից»: Յե՛վ այնուհետև՝ «Ամենավորք որինազանցութեանը, խորհրդային կարգի ամենավորք խախտումն արդեն մի օրէք է, վորն անմիջապէս ոգտագործում են աշխատավորների թշնամիները...» (Լենին, Յերկեր, հատոր XXIV, էջ 433—434):

Վ. Ի. Լենինի հռչակավոր նամակն՝ ուղղած ընկեր Ստալինին Քաղբյուրոյի համար «Յերկակի» յենթակալութեան և որինականութեան մասին» (Լենին, Յերկեր, հատ. XXVII, էջ 298—301), 1922 թվին հանրապետական դատախազութեան, իսկ 1933 թվին նաև Միութենական դատախազութեան կազմակերպումը, նպատակ ունեցին հատկապէս ամրապնդելու սոցիալիստական որինականութեանը:

ԽՍՀ Միութեան, միութենական և ավտոնոմ հանրապետութեանների դատարանակազմութեան մասին որենքը, թվելով սոցիալիստական արդարադատութեան խնդիրները, հատկապէս ուշադրութեան է դարձնում այն բանի վրա, վոր՝ «ԽՍՀՄ-ում արդարադատութեան խնդիրն է՝ ապահովել խորհրդային որենքների ճշգրիտ և անշեղ կատարումը ԽՍՀՄ բոլոր հիմնարկութեանների, կազմակերպութեանների, սրաշտոնատար անձերի և քաղաքացիների կողմից»:

Ահա թէ ինչու առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճուի ճշտութեանն ստուգող վերադաս

դատարանը ամենից առաջ ուշադրութեան է դարձնում այն բանի վրա, թէ դործի քննութեան և դատավճիւ կայացնելու պահին ինչ չափով են պահպանված յեղել որենքները, քանի վոր որենքների խախտումը պետք է առիթ լինի դատավճուի բեկանման համար:

2. ԴԱՏԱՎՃՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Վերադաս դատարանը ստորադաս դատարանների դատավճիւների վերաբերմամբ յեղած դանդառների կամ բողոքների հիման վրա ստուգելով իր մոտ ստացված գործերը, չի սահմանափակվում միայն այն բանը պարզելով, թէ վորքանով ճիշտ է կիրառվել որենքն առաջին ատյանի դատարանի կողմից, այլև նա ստուգում է դատավճուի հիմնավորվածութեանն՝ ըստ ելութեան:

Դատավճիւների ստուգման անհրաժեշտութեանը, ինչպէս նրանց որինականութեան, նույնպէս և նրանց հիմնավորվածութեան տեսակետից—նշում է ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետութեանների դատարանակազմութեան մասին որենքի 15-րդ հոդվածը: Այդ հոդվածում ասված է՝ «Վերադաս դատարանը, դանդառների և բողոքների քննութեան ժամանակ, ըստ գործում յեղած և կողմերի ներկայացրած նյութերի ստուգում է ստորադաս դատարանի կայացրած դատավճուի կամ վճուի որինականութեանը և հիմնավորվածութեանը»:

Ի՞նչ կնշանակի դատարանի դատավճուի ճշտութեան ստուգում վոչ միայն նրա որինականութեան տեսակետից, այլև նրա հիմնավորվածութեան տեսակետից:

Այդ կնշանակի, վոր վերադաս դատարանը պարտավոր է ստուգել վոչ միայն քրեական որենքի կիրառման ճշտութեանը, վորով նախատեսված է տվյալ հանցագործութեանը, որենքի պահանջներին համապատասխան դատարարոյալի նկատմամբ պատիժ կիրառելու ճշտութեանը, կողմերին վերապահված պրոցեսուալ իրավունքների պահպանութեանը դատարանի կողմից և այլն, այլև պարտավոր է ստուգել՝ թէ գործի նյութերով վորչափով է հաստատվում, վոր հանցագործութեանը կատարված է

հատկապես այն անձի կողմից, վորը դատապարտվել է, և վոր դատապարտյալը կատարել է հատկապես այն հանցագործութիւնը, վորի համար նա դատապարտվել է: Դա վերադաս դատարանի ամենակարեւոր խնդիրն է:

Դատարանի վճիռը միայն այն ժամանակ է հարկ յեղած քաղաքական և հասարակական նշանակութիւնն ստանում, յերբ նա բավականաչափ համոզիչ է, յերբ նրա հետ ծանոթացող ամեն վոք ճիշտ է համարում այն: Դատավճիռն այդպիսի համոզութիւն կարող է ձեռք բերել այն ժամանակ, յերբ նա արացուցիչ է, յերբ նա պատճառաբանված է, յերբ նրա մեջ ճիշտ են գնահատված գործի բոլոր փաստական հանգամանքները: Ահա դատավճիռի հենց այդ կողմն է, վոր ստուգման է յենթարկում վերադաս դատարանը: Նրա պարտականութիւնն է՝ բեկանել ամեն մի դատավճիռ, վորն իրենից սոսկական հաստատութիւն է ներկայացնում, վորը հիմնված է գուշակութիւնների և յենթադրութիւնների վրա:

3. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԱՏՈՐԱԳԱՍ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ուսումնասիրելով գործերը՝ ստուգելով դատավճիռները նրանց որինականութիւն և հիմնավորվածութիւն տեսակետից, բեկանելով սխալ դատավճիռը կամ նրա մեջ այս կամ այն փոփոխութիւնները մտցնելով, վերադաս դատարանը հսկողութիւն է իրականացնում նրա վերահսկողութիւնը յենթակա դատարանների նկատմամբ: Ամեն մի վորոշում, վոր կայացնում է վերադաս դատարանն իրեն ստուգած գործով, բացահայտում է դատարանի սխալները և սովորեցնում նրան ճիշտ դատավճիռներ արձակելու: Վերադաս դատարանն իրազեկ է լինում իրեն վերահսկողութիւն յենթակա բոլոր դատարանների աշխատանքներին, նա ծանոթանում է նրանց աշխատանքների մեջ յեղած թերութիւնների հետ, իմանում է այս կամ այն դատավորի թերութիւնները:

Դրանումն է կայանում դատավճիռների գանդատարկման և բողոքարկման հսկայական նշանակութիւնը. դրա-

նով պահպանվում է հանրային շահն ամեն մի գործում, պաշտպանվում են դատապարտյալի իրավունքները, որենքի ըմբռնողութիւն և կիրառման մեջ միատեսակութիւն է սահմանվում, դատարանները սովորում են բարձրացնել իրենց աշխատանքի վորակը և ճիշտ կերպով ստուգված ու խելացիորեն պատճառաբանված դատավճիռներ արձակել:

Գ Լ ՈՒ Ե II

ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ՅԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊՐՈՅԵՍԻ ՄԵՋ

Բուրժուական քրեական պրոցեսը դատավճիռների գանդատարկման և բողոքարկման յերկու ձև գիտի՝ ապելլացիան և կասացիան (վճոարեկութիւն):

1. ԱՊԵՆԼԱՅԻԱ (ՎԵՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ)

Գանդատարկման այս ձևի ելութիւնը կայանում է նրանում, վոր վերադաս դատարանը կողմի գանդատի հիման վրա գործը նորից է վերանայում ըստ ելութիւն այն կարգով, վոր կարծես թե գործը ըսվում է առաջին անգամ: Հրավիրվում և հարցաքննվում են բոլոր այն վկանները, վորոնք արդեն հարցաքննված են յեղել գործի առաջին քննութիւն ժամանակ, կողմերն իրավունք ունեն նոր վկաններ ցույց տալու, նոր փաստաթղթեր և ամեն տեսակի այլ ապացույցներ ներկայացնելու, վորոնք անգամ առաջին ատյանի դատարանի քննութիւն առարկա չեն յեղել: Սակայն դատարանը կարող է սահմանափակվել հարցաքննված վկանների ցուցմունքների արձանագրութիւններով և ի խախտումն անմիջականութիւն սկզբունքի, վկանների բանավոր ցուցմունքը փոխարինել նրանց ցուցմունքների գրա-

վոր արձանագրութեամբ: Գործի այդպիսի քննութեան հետեանքով դատարանը պարտավոր է ինքնուրույն և նոր դատավճիռ կայացնել: Այդ դատավճիռը կարող է լիովին տարբերվել առաջինից, իսկ յեթե գործը դատախազի բողոքարկման հիման վրա յե քննութեան անունով, ապա նոր դատավճռով կարող է առավել խիստ պատիժ վորոշվել, քան յեղել է առաջինով:

Դատավճիռները գանդատարկման այդ ձևի բացասական կողմերն ակնհայտ են՝ 1) նա չտեսնված քաջքուկ է ստեղծում և գործնականում հանդուժ է նրան, վոր ամեն մի գործ կարող է անվերջ ձգձգվել: 2) գործը կորցնում է իրեն այժմեականութեանը, նրա ամբողջ հասարակական իմաստը հողմացրիվ է լինում, իսկ կողմերը դատապարտվում են գործի համար անվերջ դատարանից դատարան թափառելուն: 3) հանցադործութեան ղեկավար ճշտութեան իսկ կասկածելի յե դառնում—վկանները կամ մոռանում են այն փաստերը, վորոնց մասին նրանք պետք է հաղորդեն դատարանին, կամ չեն կարողանում դատարան ներկայանալ այլ տեղ մեկնելու, մահվան և այլ պատճառներով: 4) գործի քննութեանը գրավոր բնույթ է կրում, վորովհետև ճետե շատ հաճախ հարկադրված են լինում ղիմելու գրավոր ցուցմունքների հրապարակման, փոխանակ այդ ցուցմունքները բանավոր լսելու և 5) մեղադրյալը գանդատի հետեանքով կարող է առավել ծանր պատիժ ստանալ: Գանդատարկման այդ ձևը բնորոշ է բուրժուական դատարանի համար, վորտեղ քաջքուկը և արհամարհանքը լայն աշխատավորական մասսաների իրավունքների նկատմամբ՝ որինականացած են և հանդիսանում են սովորական յեբույթ: Գանդատարկման այդ ձևը համապատասխանում է բուրժուական դատարանի Փունկիցիաներին՝ ճնշել աշխատավորներին և ամեն կերպ պաշտպանել ղրամի քսակի շահերը: Ահա թե ինչու նա անընդունելի յե մեր քրեական պրոցեսի համար և ղուրս է վանված մեր դատարանից ղեռ նրա կազմակերպվելու հենց առաջին որից, դատարանի վերաբերյալ 1917 թվի նոյեմբերի 24-ի առաջին ղեկերտի հրապարակումով:

Գանդատարկման այս կարգի էյությունն այն է, վոր վերադաս դատարանը վերանայում է արդեն վճռված գործը վոչ ղստ էյութեան, այլ միայն ձևական տեսակետից: Նրա խնդիրն է պատասխանել մեկ հարցի՝ առաջին առայնի դատարանը, գործի քննութեան ժամանակ, չի՞ թույլ տվել արդյոք որևեքի ձևական խախտում: Յեթե տեղի յե ունեցել այդպիսի խախտում, դատավճիռը բեկանվում է գործը նոր քննութեան և հանձնվում նույն դատարանին, բայց նոր կազմով, իսկ յեթե այդպիսի խախտում չի յեղել, դատավճիռը յենթակա չէ բեկանման, թեկուզ և այն ղստ էյութեան սխալ լինի: Գործի էյությունը դատարանին չի հետաքրքրում, միայն թե պահպանված լինի որևեքը: Այդ ձևական քննութեանն այստեղ հասցված է մաքսիմալ սահմանադի, և դատարանը չի կարող ղուրս գալ այն շարժառիթների սահմաններից, վորոնք բերում է վճիռը գանդատարկողը, թեկուզ և գործի մեջ լինեն և այլ առավել էյական առիթներ: Դեռ ավելին, վերադաս դատարանը բեկանելով դատավճիռը, բեկանում է միայն այն դատապարտյալների նկատմամբ, վորոնք բեկման գանդատ են տվել և թեև բեկանվող դատավճիռը սխալ է համարվում, նա այնուամենայնիվ ուժի մեջ է մնում նրա նկատմամբ, ով վորեև պատճառով ի վիճակի չի յեղել այն գանդատարկելու: ձիչա է, իրականում վոչ մի վճռաբեկ դատարան յերբեք չի սահմանափակվում այդ ձևական պահանջներով, բայց յերբ այդ շահավետ է տիրապետող դատակարգի համար, շատ ուշադրութեամբ է վերաբերվում նաև գործի էյութեանը, ամեն կերպ մտահոգվելով այն մասին, վոր պետքի շահագործողների շահերը խախտված չլինեն: Վրճառաբեկ քննութեան այդ իրավարանական Փորձալիզմը ղուրս էյություն ունենալով կատարյալ անձեռնխելութեամբ, հնարավորութեան է տալիս բուրժուական դատարանին քուզարկվել ձևի տակ, վորպեսպի հաստատի ղստ էյութեան սխալ դատավճիռը: Բուրժուական վճռաբեկութեան պրակտիկան ղիտի ազդակող ղեկավեր, յերբ ակնհայտորեն անարգար դատավճիռները մնացել են ուժի մեջ, ճանաչվել

Են ճիշտ միայն նրա համար, վոր «ձևական տեսակետից» իրենց մեջ վոչ մի խախտում չեն պարունակել: Վճռարեկ դատարանի այդպիսի վճռի վառ որինակ տալիս է Լ. Ն. Տուրտոյը իր հռչակավոր «Հարություն» վեպի մեջ:

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր դանդատարկման այդ ձևը ևս բոլորովին անընդունելի չէ խորհրդային դատարանի համար, վորին խորթ է այդպիսի բյուրոկրատական ֆորմալիստիկան, վորն այնպես շեշտակիորեն բնութագրվել է Լենինի կողմից՝ «ձևականորեն՝ ճիշտ է, իսկ ըստ էություն ծաղրանք»: Մեր դատարանը ձգտում է ամեն մի գործով վորոնելու և դանելու ճշմարտությունը, նա չի թույլ տալիս, վորպեսզի անմեղ մարդը դատապարտվի, թեկուզ և այդ դատապարտության ժամանակ պահպանված լինեն բոլոր ձևական պահանջները: Զգայուն, ուշադիր վերաբերմունքը մարդու նկատմամբ, ամբողջովին համակում է մեր սոցիալիստական արդարադատությանը, դրա համար էլ բուրժուական պրոցեսի ֆորմալ վճռարեկությունը մեր կողմից ժխտված է այնպես, ինչպես և սպելլ-լացիան, չենց խորհրդային դատարանի գոյության առաջին իսկ օրերից: Ընթանալով պրոցեսի լայն դեմոկրատիզացիայի և քաղաքացիների իրավունքները դատարանում համակողմանի պահպանելու ուղիով, խորհրդային վճռարեկությունը չգիտի նմանապես և այն սահմանափակումները, վորոնք սահմանված են բուրժուական պրոցեսի մեջ դատավճիռների դեմ դանդատներ տալու ժամանակ: Բուրժուական պրոցեսի մեջ դանդատ տալը պահանջում է, վոր դանդատարների կողմից մուծվի վորոչ, հաճախ բարձր, դրամական գրավ: Այդ գրավն անցնում է գանձարանին, չի թե դանդատը թողնվում է առանց հետևանքի: Հասկանալի չէ, թե ումն է խիտում այդ որևեցը՝ չքավորին, բանվորին, մանր ծառայողին, գյուղացի-բատրակին, իսկ զա նշանակում է, վոր աշխատավորները և շահագործվողները հաճախ չեն կարող դանդատարկել ակնհայտորեն սխալ դատավճիռները:

Խորհրդային որևեցը ժխտեց ապելլացիան և կասացիան վորպես դանդատարկման ձև, վոչնչացնելով և այն

բոլոր սահմանափակումները, վորոնք այդ հարցում պարունակում է իր մեջ բուրժուական պրոցեսը:

Գ Լ Ո Ի Խ III

Գ.Ա.ՏԱ.ՎՃԻՌՆԵՐԻ Գ.Ա.ՆԳ.Ա.ՏԱ.ԲԿՄԱ.Ն ՅԵՎ,
ԲՈՂՈՔԱՐԿՄԱ.Ն ՏԵՍԱԿՆԵՐԸ ԽՈՐՀՐԴ.Ա.ՅԻՆ
ՔՐԵԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՄԵՋ

Խորհրդային քրեական պրոցեսը դատավճիռների վերանայման յերեք ձև գիտի՝ 1) բեկանման գանգատի կամ բողոքի հիման վրա, 2) հսկողության կարգով տրված բողոքի հիման վրա, 3) նոր յերևան յեկամ հանգամանքների հիման վրա:

I. ՎՃՌԱԲԵԿ Գ.Ա.ՆԳ.Ա.ՏԱ.ԲԿՈՒՄ

1. ԸՆԴՆՆՈՒՄ ԸՍՏԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վորպես առաջին ստյան գործը քննող դատարանի ամեն մի դատավճռի դեմ կարող է դանդատ տրվել դատապարտյալի կողմից (բեկման դանդատ) և բողոք՝ դատախազի կողմից (բեկման բողոք): Դատավճիռը համարվում է ուժի մեջ մտած միայն այն բանից հետո, յերբ անցնում է դանդատ կամ բողոք տալու ժամկետը և նրանք տրված չեն յերկ, կամ յերբ դանդատարկված դատավճիռը թողնվել է ուժի մեջ վերադատ դատարանի կողմից: Վրնոսրեկ քննությունն իրենից ներկայացնում է այնպիսի դատավճիռների քննություն, վորոնք դեռ որինական ուժի մեջ չեն մտել:

Գանդառներ և բողոքներ կարող են տրվել բոլոր դատարանների դատավճիռների դեմ, բացառությամբ այն դատավճիռների, վոր արձակվում են միութենական հանրապետությունների Գերագույն դատարանների և ԽՍՀ Միություն Գերագույն դատարանի կողմից: Այս բացառությունն արված է նրա հիման վրա, վոր միութենական հանրապետությունների Գերագույն դատարանները, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրություն և միութենական հանրապետությունների սահմանադրությունների, հանդիսանում են դատական բարձրագույն մարմինները և հսկողություն են իրականացնում ամբողջ միութենական հանրապետության բոլոր դատարանների դատական գործունեություն վրա, իսկ ԽՍՀՄ Գերագույն դատարանը հանդիսանում է ԽՍՀ Միության բարձրագույն դատական մարմինը: Գանդատարկման և բողոքարկման յենթակա չեն նաև ՌԽՖՍՀ Քր. Որ. 58⁷, 58⁹ և 58¹¹ հոդվածներով և մյուս միութենական հանրապետությունների Քր. Որ. համապատասխան հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ յեղած դատավճիռները (Որ. Ժող. 1934 թ. № 64, հոդ. 459 և 1937 թ. № 61, հոդ. 266):

3. ՈՒՄ ԿՈՂՄԻՅ ԿՈՐՈՂ Ե ԳԱՆԳԱՏԱՐԿՎԵԼ ԿԱՄ ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ ԴԱՏԱՎՃՌՈՒՐ

Վճռարկի գանդատարկման իրավունքն ունենում վերապահվում է՝ 1) դատապարտյալին և նրա պաշտպանին, 2) տուժողին, յեթե նա գործում կողմ է ճանաչված, և նրա շահերի ուրինական ներկայացուցչին:

Մեղադրողը վճռարկի բողոք կարող է բերել դատական պրոցեսում: Հարկավոր է նկատի ունենալ, վոր բացի դատախազական հսկողություն ներկայացուցչներից, քրեական պրոցեսում մեղադրանքը կարող են պաշտպանել նաև այլ անձնավորություններ, այն է՝ տուժողը, յերբ ունենում այդ իրավունքը վերապահված է նրան, արհեստակցական միությունների լիազորները, աշխատանքի տեսուչները, տեխնիկական, սանիտարական և այլ տեսչությունների

ներկայացուցչները՝ նրանց վարած գործերով, և դատարանի վորոշմամբ թույլատրված այլ անձնավորություններ:

Թված բոլոր անձնավորությունները դատավճիռի դեմ անմիջականորեն բողոք բերելու իրավունք ունեն. իսկ դատախազություն հանձնարարություններ պրոցեսում մեղադրանքը պաշտպանող անձնավորությունները (հասարակական մեղադրողները) բողոքը պետք է տան դատախազություն միջոցով:

Դատարանի դատավճիռի դեմ բողոքը կարող է տրվել վոչ միայն դատախազի կողմից, վորը մասնակցել է գործին, այլև ամբողջ դատարանի վրա դատական հսկողություն իրականացնող ուրիշ դատախազի՝ շրջանի, յերկրի, մարզի դատախազի կողմից: Այդ կարգը բղխում է դատախազություն միասնություն սկզբունքից:

4. ՎՃՌԱՐԵԿ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Գանդառներ և բողոքներ տալու համար ունենում սահմանված են կայուն ժամկետներ: Այդ ժամկետների սահմանելը սկզբունքային նշանակություն ունի, վորովհետև նա վերացնում է քաջքուկը դատական վարույթից և ոժտնդակում և դատական դատավճիռ ուժի ամրապնդմանը:

Միութենական հանրապետությունների քրեական-դատավարական ունենալը ժողովրդական դատարանի դատավճիռների և յերկրային (մարզային) դատարանի, ինչպես նաև ինքնավար հանրապետության Գերագույն դատարանի դատավճիռների վճռարկի գանդատարկման համար տարբեր ժամկետներ են սահմանում: Ժողովրդական դատարանի դատավճիռների գանդատարկման և բողոքարկման համար ժամկետ է սահմանված հինգ օր՝ հաշված դատավճիռը կայացվելու օրից (Տաջիկական ԽՍՀ-ում՝ 10 օր, Ուզբեկական ԽՍՀ-ում՝ 10 օր քաղաքի համար և 14 օր՝ գյուղական վայրերի համար), մնացած դատարանների դատավճիռների գանդատարկման համար՝ 72 ժամ, հաշ-

ված դատավճուի պատճենը դատապարտյալին հանձնելու մոմենտից: Բողոք տալու համար սահմանված ե միևնույն ժամկետը, միայն այն տարբերութեամբ, վոր նրա ժամկետը սկսվում է դատավճիւրը հայտարարելու մոմենտից:

Յեթե գործը քննութեան ե առնվել մեղադրյալի բացակայութեամբ, բեկման գանդատ տալու ժամկետը ժողդատարանի համար սահմանվում է հինգ որ, բայց վոչ թե դատավճիւրը կայացվելու որից, այլ դատավճուի պատճենը դատապարտյալին հանձնելու որից հաշված:

5. ԳՍԱՎՃԻՌՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՅԵՎ ԳՈՐԾԵՐԸ ՎԵՐԱԳԱՍ ԳԱՏԱՐԱՆԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Քաշքշուկը վերացնելու նպատակով միութենական հանրապետութեանների քրեական-դատավարական որենսգրքերը (ՌՍՖՍՀ Քրեական-դատավարական որենսգրքի 346, 400, 401 հոդվածները ե մյուս միութենական հանրապետութեանների քրեական-դատավարական որենսգրքերի համապատասխան հոդվածները) դատավճուի պատճենները հանձնելու համար ե գործը վերադաս դատարանին ուղարկելու համար կայուն ժամկետներ են սահմանում:

Գատարանի դատավճուի պատճենը մեղադրյալին պետք է հանձնվի դատավճիւրը կայացվելուց հետո, մեղադրյալի բացակայութեամբ արձակված դատավճուի պատճենը դատապարտյալին պետք է ուղարկվի դատավճիւրը կայացվելու մոմենտից քանչորս ժամվա ընթացքում: Այդ ժամկետն ընդհանուր ե բոլոր միութենական հանրապետութեանների համար ե միայն Ուկրաինական ՍՍՀ-ում այն բարձրացված ե մինչև 48 ժամվա:

Գործը գանդատի կամ բողոքի հետ միասին վերադաս դատարանին ուղարկելու համար ժողովրդական դատարանների համար ժամկետ ե սահմանված չերեք որ, իսկ յերկրային (մարզային) դատարանների ե ինքնավար հանրապետութեանների Գերագույն դատարանների համար՝ 24 ժամ, գանդատը կամ բողոքը ստացվելու մոմենտից հաշված:

Որենքով սահմանված ժամկետներում գանդատ կամ բողոք չտալու արդյունքն այն ե լինում, վոր դատավճիւրը որինական ուժի մեջ ե մտնում ե յենթակա յե դատում կատարման: Սակայն ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի լինելու դեպքում որենքն իրավունք ե վերապահում ժամկետը վերականգնելու մասին, միջնորդութեան հարուցելու, դատավճիւրը կայացնող դատարանի առաջ:

Որենքը խոսում է ժամկետը վերականգնելու մասին, ե, հեռուպետ, նոր ժամկետը չի կարող ավելի լինել նրանից, վորը սահմանված ե որենքով գանդատարկումների համար (այն ե, վոչ ավելի քան 5 որ ժողովրդական դատարանի դատավճիւրների համար ե 72 ժամ մնացած դատարանների դատավճիւրների համար):

Այդ միջնորդութեանները ՌՍՖՍՀ Քրեական-դատավարական որենսգրքի 345 հոդվածի ե մյուս միութենական հանրապետութեանների քրեական-դատավարական որենսգրքերի համապատասխան հոդվածների համաձայն պետք ե անհապաղ քննութեան առնվեն դատարանի նախապատրաստական (անորինական) նիստում: Որենքը չի սահմանում այնպիսի պատճառներ, վորոնց առկայութեան դեպքում գանդատ տալու ժամկետը բացթողնելը հարգելի համարվի, այլ թողնում է այն իրեն իսկ դատարանի գնահատութեանը: Սակայն պրակտիկան մի շարք կանոններ ե մշակել, վորոնցով պետք ե ղեկավարվել գանդատարկման ժամկետը վերականգնելու հարցը լուծելու ժամանակ: Հարգելի յեն համարվում հետևյալ դեպքերը՝ 1) դատապարտյալի հիվանդութեանը, 2) պաշտոնական անսպասելի գործուղումը, 3) հանգամանքների այնպիսի դասավորութեան, վորը զրկել է դատապարտյալին ժամանակին գանդատ տալու հնարավորութեանից, ե 4) ամեն տեսակի այլ պատճառներ, վորոնք դատապարտյալը չի կարող նախատեսել: Պետք ե ասել, վոր դատավորները, վորպես կանոն, գանդատարկման ժամկետները վերականգնելու վերա-

բերյալ միջնորդութուններով ճիշտ միջիտներ են կայացնում, բայց վորպես բացառութուն, տեղի յեն ունենում միջնորդութունների անհիմն մերժման ղեպքեր:

Նման անիրավացի մերժումները պաշտպանվելու համար, որենքը թույլ ե տալիս ժամկետի վերականգնումը մերժելու դեմ գանդատ տալ վերադաս դատարանին: Ժամկետի վերականգնման մերժումը հանգում ե միայն քաջքշուկի: Ժամկետի վերականգնման մերժումը պետք ե պատճառաբանված լինի դատարանի կողմից:

Այն դանդառները, վորոնք ներկայացվել են ժամկետը բաց թողնելուց հետո, յեթե միջնորդութուն չկա այն վերականգնելու մասին, դատարանի կողմից վերադարձվում են դանդառարերին: Ընդվորում, դատավորը պետք ե ցույց տա այն պատճառները, վորոնց համար վերադարձվում ե դանդառը, և բացատրի դանդառարերին ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդութուն հարուցելու նրա իրավունքները:

7. ԲԵՎԿԱՆ ԳԱՆԳԱՏՆԵՐ ԵՅՎ ԲՈՂՈՒԲՆԵՐ ՏԱԼՈՒՎ ԿԱՌԳԸ

Գատավճիտների վերաբերմամբ յեղած դանդառները և բողոքները տրվում են այն դատարանին, վորը կայացրել ե գանդատարկվող դատավճիտը, բայց հանցեաղբվում են վերադաս դատարանին:

«Վերադաս դատարան» կոչվում ե այն դատարանը, վորին դանդառարկման կարգով յենթակա յե գատավճիտ կայացնող դատարանը: Մեր դատական սխտեմում այդ յենթակայութունն արտահայտվում ե հետևյալում՝

1. յերկրամասային (մարզային) բաժանում ունեցող միութենական հանրապետութուններում ժողովրդական դատարանի համար վերադաս դատարան ե հանդիսանում համապատասխան յերկրային կամ մարզային դատարանը, իսկ յերկրային (մարզային) բաժանում չունեցող միութենական հանրապետութուններում՝ միութենական հանրապետութւյան Գերագույն դատարանը:

2. յեթե յերկրամասի (մարզի) սահմաններում ոկրուգային դատարան, կամ ինքնավար մարզի դատարան կա,

այս ժողովրդական դատարանի համար վերադաս դատարան ե հանդիսանում ոկրուգային դատարանը կամ ինքնավար մարզի դատարանը:

3. ինքնավար հանրապետութուններում ժողովրդական դատարանի համար վերադաս դատարան ե հանդիսանում ինքնավար հանրապետութւյան Գերագույն դատարանը:

4. ոկրուգային դատարանների, ինքնավար մարզերի դատարանների, յերկրամասային (մարզային) դատարանների և ինքնավար հանրապետութւյանների Գերագույն դատարանների համար վերադաս դատարան ե հանդիսանում միութենական հանրապետութւյան Գերագույն դատարանը:

Սակայն, յեթե առանցելով ժողովրդական դատարանին, դանդառը անմիջականորեն տրվել ե վերադաս դատարանին և բեկման դանդառ տալու ժամկետը բաց չի թողնելված, դանդառը համարվում ե ժամկետին տրված: Այս ղեպքում վերադաս դատարանը ստորագաս դատարանից պահանջում ե գործը և նշանակում քննութւյան: Գանդատը ժամկետին տրված ե համարվում նաև այն դեպքում, յեթե նա ժամկետի սահմաններում հանձնված ե յեղել փոստին:

8. ԳՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆԲԱ ԿՈՂՄԻՑ ԲԵՎԿԱՆ ԳԱՆԳԱՏԸ ԿԱՄ ԲՈՂՈՒԲԸ ՍՏԱՆԱԼՈՒՅ ԷՆՏՈ

Բեկման դանդառները և բողոքը պետք ե կարվեն գործին, գործի թերթերը համարակարգվեն և դանդառ ու բողոք տալու ժամկետն անցնելուց հետո գործը դանդառների և բողոքի հետ միասին, ինչպես նաև գատավորի կողմից վավերացված գատավճոի պատճենի հետ (վերադաս դատարանի վարույթի համար) միասին, անհապաղ պետք ե ուղարկվի վերադաս դատարանին, իսկ յեթե գատավճոի գանդատարկման և բողոքարկման ժամկետն անցնելուց հետո վոչ դանդառ և վոչ ել բողոք չի ստացվել դատարանում և յեթե գործը չի պահանջված վերադաս դատարանի կողմից, այս դատավորը գատավճիտն ուղարկում ե համապատասխան մարմիններին՝ այն ի կատար ածելու համար (տես «Դատական գատավճիտ» գրքույկը):

Բոլոր դեպքերումն է, վոր դատավորը պետք է սպասի որենքով կողմերին վերապահված գանդատարկման և բողոքարկման ժամկետը լրանալուն:

Վոչ, վոչ միշտ: Այն դեպքերում, յերբ տվյալ գործով քուրը կողմերից գանդատները և բողոքը ստացվում են մինչև սահմանված ժամկետը, գործը վերադաս դատարանին և ուղարկվում անմիջապես:

Դատարանի դատավճռի դեմ գանդատը տրվում է գրավոր ձևով: Ըստ Աղբրեջանական ԽՍՀ Քրեական-դատա-վարական որենսգրքի թույլատրվում է նաև բանավոր գանդատներ բերել: Այն դեպքում, յերբ մեղադրյալը բանավոր հայտարարութուն է անում այն մասին, վոր նա դատավճռից դժգոհ է, դատարանը պարտավոր է գանդատարների առարկութունները մտցնել դատական նիստի արձանագրության մեջ կամ հատուկ արձանագրության մեջ, վորը ստորագրվում է գանդատարների կողմից: Այդպիսի արձանագրությունն այդ դեպքում փոխարինում է բեկման գանդատին:

Կողմերը գանդատները կարող են տալ իրենց մայրենի լեզվով և նրանց բովանդակութունը յենթակա չէ գանդատը ընդունող դատարանի քննադատության: Վորքան ել ներկայացված գանդատն անհիմն լինի, վճիռ կայացնող դատարանը պարտավոր է ընդունել այն և տալ համապատասխան ընթացք: ՌԻՅՍՀ Քր. Դատ. Որ. 401 և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. որենսգրքերի համապատասխան հոդվածների համաձայն, գործը բեկման գանդատի կամ բողոքի հետ միասին վերադաս դատարանին ուղարկելիս, դատարանին իրավունք է վերապահվում գործին կցելու, արված գանդատի կամ բողոքի առթիվ, իրեն բացատրությունները:

9. ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱԴԱՍ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ա) Գործը լսելու մասին կողմերին ծանուցելը

Միութենական հանրապետությունների գործող քրեական դատավարական որենսգրքերը պահանջում են, վոր-

պեսզի ժողովրդական դատարանի դատավճիռների դեմ տրված բեկման գանդատները և բողոքները վերադաս դատարանում լսելուն հրավիրվեն կողմերը: Միայն այն դեպքում, յերբ կողմը չի հայտարարվել, կամ չի ներկայացվել, իսկ գործում տեղեկություններ կան այն մասին, վոր ծանուցազրկը հանձնված է յեղել նրան, գործը կարող է լսվել և կողմերի բացակայությամբ:

Այդ կարգից չեղում սահմանված է այն գործերի համար, վորոնք բեկման գանդատի կամ բողոքի հիման վրա քննության են առնվում միութենական հանրապետությունների Գերագույն դատարաններում:

Ըստ գործող որենքի, միութենական հանրապետությունների Գերագույն դատարաններում և ԽՍՀՄ Գերագույն դատարանում բեկման գանդատները և բողոքները քննության առնելիս կողմերը նիստին չեն հրավիրվում, բայց ներկայանալու դեպքում թույլատրվում է մասնակցելու նիստին:

Գործերը քննության նշանակելու և լսելու որվա մասին կողմերին ծանուցելու կարգի վերաբերմամբ սահմանվել է տարբեր պրակտիկա—մեկը՝ ժողովրդական դատարանների դատավճիռների գանդատարկման համար, մյուսը՝ յերկրամասային (մարզային) դատարանների, ինքնավար հանրապետությունների Գերագույն դատարանների, ինչպես նաև ժողովրդական դատարանների դատավճիռների գանդատարկման համար, յեթե նրանց դատավճիռները գանդատարկվում են միութենական հանրապետությունների Գերագույն դատարաններին (վորտեղ յերկրամասային (մարզային) բաժանում չլա):

Ժողովրդական դատարանի կողմից քննված և գանդատների ու բողոքների հիման վրա վերադաս դատարանին հանձնված գործերը լսելու որվա նշանակումը և այդ մասին շահագրգռված անձերին տեղեկություն տալը (ծանուցելը) սովորաբար կատարվում է այն դատարանի ժողովրդական դատավորի կողմից, վորը քննել է գործը:

Ժողովրդական դատավորը յերկրամասային (մարզային) դատարանից կամ ինքնավար հանրապետության Գե-

բազույն դատարանից նախապէս ստանում ե ուրացուցային պլան, ուր հիշատակված ե լինում, թե նա վո'ր օրերին կարող ե գործեր նշանակել քննութեան յերկրամասային (մարդկային) կամ ինքնավար հանրապետութեան Գերագույն դատարանում, հաշի առնելով այն ժամանակամիջոցը, վորը անհրաժեշտ ե գործն ուղարկելու ե գործի հետ դատարանի անդամների ծանոթանալու համար: Ժողովրդական դատավորը դատավճիւրը հայտարարելու ժամանակ կամ դատավճռի պատճենն ուղարկելու ժամանակ հայտարարում ե (ստորագրութեամբ) այն թվականը, յերբ կլավի գործը դանդատ կամ բողոք տալու դեպքում: Այս կարգը մի շարք անհարմարութեաներ ունի: Այսպէս՝ լինում են դեպքեր, յերբ կողմերին հայտարարված օրը գործը վերադաս դատարանում չի կարող լսվել նրա համար, վոր գործը դեռ ժողովրդական դատարանից ստացված չի լինում: Յերբմի հետո տեղերից յեկած կողմերը, հարկադրված են լինում սպասել գործի ստացվելուն: Պարզվում ե, վոր վերադաս դատարանում մեկ օրվա համար այնքան շատ գործեր են քննութեան նշանակված լինում, վոր դատարանը մեկ օրվա ընթացքում ի վիճակի չի լինում վերանայելու այն ե նա պետք ե փոխանցի մյուս օրվան լսելու, վորպիսի հանդամանքը ես հանդում ե դատարան յեկած մարդկանց պահելուն ե գործերի նախադատարանուման ե քննութեան շտապողականութեան: Գործերի քննութեան վորակն այդպիսի աշխատանքից խիստ ցածրանում ե:

Այդ կարգը ճիշտ համարվել չի կարող: Հարկավոր ե մեկ անգամ ընդմիշտ յուրացնել, վոր գործը բեկման կարգով քննվելու մասին կողմերը պարտադիր կերպով պետք ե իրազեկ դարձվեն: Վճռարեկ ատյանը պարտավոր ե գործը լսվելու օրվա մասին ծանուցագիր ուղարկել դանդատարերին ե գործը քննութեան նշանակել այն հաշվով, վորպեսզի դանդատարերը կարողանա ներկայանալ դատարանին: Այդ դեռ չի նշանակում, վոր դանդատարերի չներկայանալու դեպքում գործը պետք ե հետաձգվի, բայց վճռարեկ դատարանը պետք ե բավականաչափ համոզված լինի,

վոր դանդատարերին հայտնված ե գործը լսելու մասին: Այդ ծանուցման համար ապացուցյ պետք ե ծառայի հետ վերադարձված ծանուցագիրը:

Ըստ Ադրբեջանական ԽՍՀ Քրեական-դատավարական օրենսգրքի կողմերը դատական նիստին չեն հրավիրվում, բայց յեթե նրանք ներկայացել են, ապա թույլատրվում ե նրանց մասնակցելու դատական նիստին: Քննութեան նշանակված գործերի ցուցակը կախվում ե նիստից 24 ժամ առաջ: Ինչ վերաբերում ե գանգատի կամ բողոքի հիման վրա միութենական հանրապետութեանները գերագույն դատարաններում գործը լսելու օրվա մասին կողմերին տեղյակ պահելու (ծանուցելու) կարգին, ապա տարբեր միութենական հանրապետութեաններում գոյութեան ունի այսպիսի կարգ:

Ըստ Ուզբեկական ԽՍՀ Քրեական-դատավարական օրենսգրքի, գործի վճռարեկութեան կարգով վերանայվելու մասին կողմերը պետք ե իրազեկ դարձվեն դատավճիւրը հայտարարվելու պահին: Դատապարտյալը, քաղաքացիական հայցվորը ե տուժողը (վերջինս մասնավոր մեղադրանքի գործերով, յերբ նա ինքն ե պաշտպանում մեղադրանքը) ու նրանց ներկայացուցիչները պետք ե թողնվեն բացատրութեաներ տալու գործի վճռարեկ քննութեան ժամանակ:

Ըստ ՌՍԽՖՍՀ Քրեական-դատավարական օրենսգրքի կողմերը դատական նիստին չեն հրավիրվում, բայց յեթե նրանք ներկայացել են, ապա թույլատրվում ե նրանց մասնակցելու դատական նիստին: Քննութեան նշանակված գործերի ցուցակը կախվում ե նիստից 24 ժամ առաջ: Մեղադրյալին, յեթե նա ներկա չե դատական նիստին, պետք ե հետարավորութեան տալ ներկայացնելու իր բացատրութեանները:

Ըստ Հայկական ԽՍՀ Քրեական-դատավարական օրենսգրքի՝ գործերը լսվելու մասին կողմերին իրազեկ են դարձվում Գերագույն դատարանի պատերի վրա մինչև գործի լսվելը 48 ժամ առաջ ցուցակներ կախելու միջոցով:

Ըստ Տաջիկական ԽՍՀ Քրեական-դատավարական օրենսգրքի՝ վճռարեկ ատյանը գործերը լսվելու ժամանակի ե

տեղի մասին իրազեկ և դարձնում կողմերին: Կարանքի տակ պահվող դատապարտյալները, դատական նիստին ներկա լինելու նրանց ցանկութեան դեպքում, պետք է բերվեն դատարան: Մանուցադրերը ժամանակին կողմերին հանձնված լինելու դեպքում նրանց դատական նիստին չներկայանալը արգելք չի կարող հանդիսանալ գործի քննութեան համար. կողմերը դատական նիստին ներկայանալու դեպքում նրանց պետք է թողնել բացատրութեաններ տալու:

բ) Գանգատների և բողոքների հիման վրա՝ գործը վերանայող դատադատի կազմը

Բեկման գանգատների և բողոքների հիման վրա գործեր վերանայող դատարանի կազմը վորոշված է ԽՍՀՄ, միութենական և թափանցիկ հանրապետութեանների դատարանակազմութեան մասին որենքով:

Ըստ այդ որենքի, գանգատների և բողոքների հիման վրա գործերը քննութեան են առնվում համապատասխան վերադաս դատարանի դատական կոլեգիայում՝ այդ դատարանի յերեք անդամների կազմով:

գ) Գանգատների և բողոքների վերաբերյալ գործերի բնակարկման կարգը

Այն դատական նիստի կարգը, ուր բեկման գանգատների և բողոքների հիման վրա քննութեան է առնվում գործը, մանրամասն վորոշված չէ որենքի մեջ: Միութենական հանրապետութեանների քրեական-դատավարական որենքադրերում միայն ընդհանուր ցուցում կա այն մասին, վոր այդ քննարկումը կատարվում է առաջին ատյանի դատարանի կողմից գործեր քննելու համար սահմանված կանոնների համեմատ: Դատաքննութեան կազմակերպման մեջ գործող որենքադրերի այդ ելական թերութեանը մեծ բազմազանութեան է ստեղծում: Ճիշտ պետք է համարել հետևյալ կարգը: Գործը սկսվում է դատավորներից մեկի գեկուցումով, ընդվորում գեկուցումը պետք է լինի բախականաչափ լրիվ և սպառիչ: Ձեկուցման ժամանակ նպատակահարմար է հրապարակել գանգատարկվող դատավճիռը և գանգատարների

ատարկութեանները: Ձեկուցումից հետո կողմերը բացատրութեաններ են տալիս, ընդվորում առաջինը բացատրութեան է տալիս նա, ով գանգատարկել կամ բողոքարկել է դատավճիռը: Այնուհետև լսվում է դատախազի յեզրակացութեանը: Իսկ վերջին խոսքը արվում է մեղադրյալին կամ նրա պաշտպանին: Դրանից հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ:

Ելական է համարվում այն հարցը, թե կարո՞ղ են արդյոք կողմերն իրենց բացատրութեաններ տալու ժամանակ նոր ապացույցներ ներկայացնել, վորոնք առաջին ատյանի դատարանի քննութեան ատարկա չեն յեղել: Մինչև ԽՍՀՄ, միութենական և թափանցիկ հանրապետութեանների դատարանակազմութեան մասին որենքի հրատարակվելին այդ հարցը լուծվում էր բացառաբար—այդպիսի փաստաթղթեր չէր կարելի ներկայացնել: Հիշյալ որենքի 15-րդ հոդվածում ասված է. «Վերադաս դատարանը, գանգատների և բողոքների քննութեան ժամանակ, ըստ գործում յեղած և կողմերի ներկայացրած նյութերի ստուգում է ստորադաս դատարանի կայացրած դատավճիռ կամ վճիռ որինականութեանը և հիմնավորվածութեանը»: Այդ կնշանակի, վոր կողմերն իրենց բացատրութեանների մեջ կարող են նոր նյութեր ներկայացնել: Բայց այդ հնարավորութեանը չի կարելի հասկանալ տարածականորեն: Ակնհայտ է, վոր «նյութերի» տակ պետք է հասկանալ բացառապես այն փաստաթղթերը, վորոնք հաստատում են գանգատարկվող դատավճիռ անճշտութեանը: Վճարեկ ատյանը չի կարող վոչ վկաներ հրավիրել, վոչ եքսպերտների (փորձագետների) լսել—բոլոր այդ գործողութեանները հատուկ չեն վրձնարեկ դատարանին: Յեթե վկաներին և փորձագետներին հարցաքննելու անհրաժեշտութեան է առաջանում, դա ամենալավ աղացույցն է հանդիսանում այն բանի, վոր կայացված դատավճիռը չի կարող մնալ ուժի մեջ և յենթակա յեբեկանման, քանի վոր գործը բախարար լրիվութեամբ չի քննված:

դ) Դատարանի դատավճիռը բեկանելու կամ փոփոխելու հիմքերը

Ի՞նչ հիմունքներով կարող է բեկանվել դատարանի դա-

տավճիւղը: Միութենական հանրապետութիւններէ համարյա բոլոր գործող քրեական-դատավարական որենազրքերի մեջ դատավճիւններն բեկանման համար նշվում են հետեյալ պարտադիր հիմունքները.

1) կատարված քննութեան անբավարար լինելը և անձաութեյունը.

2) դատավարութեան ձևերի եյական խախտումը.

3) որենքի խախտումը կամ սխալ կիրառումը.

4) դատավճուի բացահայտ անարդարութեյունը:

Ըստ Ուկրաինական ԽՍՀ Քրեական-դատավարական որենազրքի դատավճիւղը յենթակա յե բեկանման և գործը ուղարկվում է նոր քննութեան կամ դատավճուի մեջ փոփոխութեյուններ են մտցվում հետեյալ դեպքերում.

1) յեթե դատավճիւղը չի համապատասխանում պրոկտարական պետութեան դատական քաղաքականութեան պահանջներին.

2) յեթե դատարանի կողմից նշանակված պատիժը չի համապատասխանում դատապարտյալի և նրա կողմից կատարված հանցագործութեան սոցիալական վտանգավորութեանը.

3) յեթե մնացել են չպարզաբանված այնպիսի հանգամանքներ, վորոնց պարզաբանութեյունը կարող է եյական փոփոխութեյուն մտցնել դատարանի կողմից դատավճուի մեջ բերված յեզրակացութեյուններէ մեջ.

4) յեթե դատավճիւղը, գործով պարզաբանված տվյալներէ համեմատութեյամբ, եյական հակասութեյուններ կամ եյական անորոշութեյուն կամ թերատութեյուն և պարունակում իր մեջ.

5) յեթե գործի քննութեան ժամանակ թույլ են տրվել որենքի խախտում կամ սխալ կիրառում, մասնավորապես դատավարական ձևերի, վորոնք եյակապես ազդել են դատավճուի վրա:

Շատ որենազրքեր պարզաբանութեյուններ են տալիս այն մասին, թե ի՞նչ պետք է հասկանալ դատարանի դատավճիւղը բեկանելու որենքում ցույց տրված ամեն մի հիմունքի տակ:

Քննութեյունը անբավարար և անհիշտ կատարված է հա-

մարվում, յերբ կատարվել է այն ձևով, վոր վոչ նախաքննութեան, վոչ դատաքննութեան ընթացքում չեն լուստարանվել և մնացել են այնպիսի հանգամանքներ, վորոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործի լուծման համար:

Գատավարութեան ձևերի եյական խախտումներ համարվում են պրոցեսուալ կանոններէ այնպիսի խախտումները, վորոնք գործի քննութեան ժամանակ զրկել կամ սահմանափակել են կողմերին նրանց ունեցած իրավունքներում կամ այլ կերպ խանգարել են դատարանին՝ գործը բազմակողմանիորեն քննութեան առնելու և ազդել են, կամ կարող էյին ազդել ճիշտ դատավճիւղ կայացնելու վրա:

Գատավճիւղը համենայն դեպս յենթակա յե բեկանման՝

1) դատարանի կազմը անկանոն լինելու դեպքում.

2) յեթե դատարանը գործը չի կարծել՝ անպայման կարծում առաջ բերող պայմաններէ առկայութեան դեպքում (թե վորոնք են այդ պայմանները՝ ասված է ստորև).

3) գործը մեղադրյալի բացակայութեյամբ քննութեան առնելու դեպքում, յերբ այդպիսի քննութեյունն որենքով չի թույլատրվում, և

4) գործն առանց պաշտպանի մասնակցութեան քննութեան առնելու դեպքում, յերբ այդ մասնակցութեյունը պարտադիր է համարվում:

Որեմքի խախտում կամ անհիշտ կիրառում համարվում է՝

1) յեթե դատարանը չի կիրառել մի որենք, վորը պետք է կիրառվեր.

2) յեթե կիրառել է մի որենք, վորը չպետք է կիրառվեր.

3) յեթե թույլ է տրվել որենքի սխալ մեկնաբանութեյուն, վորը հակասում է որենքի ճիշտ իմաստին կամ նրա ընդհանուր բնութեյին.

4) յեթե կիրառվել են վոչ իրավագոր առյանների կամ վոչ որինական կարգով հրատարակած կամ կենտրոնական իշխանութեան վորոշումները խախտող որենքներ ու կարգադրութեյուններ:

Որենքն ասում է, վոր հիշյալ խախտումներէ առկայութեան պայմաններում դատավճիւղը կարող է վերացվել մի-

այն այն դեպքում, յերբ դատարանի կողմից թույլ տրված սխալի հետևանքով նշանակվել է մի պատիժ, վորը չէր նշանակվի, յեթե դատարանի կողմից ճշտորեն կիրառվեր որևէքը:

Դատավճիռը բացահայտ անարդար է համարվում, յերբ դատարանի նշանակած պատիժը թեև դուրս չի գալիս որինական սահմաններից, բայց իր չափով բոլորովին չի համապատասխանում կատարված հանցագործությանը:

Այս են դատարանի դատավճռի բեկանման հիմունքները: Չնայած այդ ցուցումների կատարյալ պարզությանը և կարականությանը, դատարանների պրակտիկայում ակզի յեն ունենում որևէքի հատկապես այդ պահանջների խախտման դեպքեր:

ե) Դատավճռի բեկանմանը կամ փոփոխությանը հիմք տվող վերադաս դատարանի գործողությունները

Իսկ ի՞նչպես պետք է վարվի վերադաս դատարանը բեկման դանդաանների կամ բողոքի հիման վրա գործը քննության ատենելիս, յեթե նա յերեան է բերում վերը նշված խախտումներից մեկն ու մեկը:

Մեղադրյալին, իր մեջ հանցանքի բազկացությունը չպարունակող արարքի համար դատապարտելու դեպքում, ինչպես նաև գործը դատարանի կողմից չկարճվելու դեպքում, յերբ կարճացան համար այլ պարտադիր առիթներ կան, վերադաս դատարանը պետք է բեկանի դատարանի դատավճիռը և գործը վարույթով կարճի:

Միութենական հանրապետությունների Քրեական-գտատվարական որևնագրքերը նախատեսում են գործի կարճման պարտադիր լինելը հետևյալ դեպքերում.

1) յերբ մեղած է մեղադրյալը:

2) յերբ մեղադրյալը հաշտվել է տուժողի հետ այնպիսի հանցագործությունների վերաբերյալ գործերով, վորոնք կարող էյին հարուցվել վոչ այլ կերպ, քան տուժողի գանդատի հիման վրա:

3) յերբ բացակայում է տուժողի գանդատը այնպիսի հանցագործությունների վերաբերյալ գործերով, վորոնք կարող էյին հարուցվել վոչ այլ կերպ, քան այդպիսի գանդատների հիման վրա:

4) յերբ լրացել է վաղեմության ժամկետը:

5) յերբ մեղադրյալին վերագրված գործողությունների մեջ բացակայում է հանցակազմը:

6) ամենխոտիայի կամ ներման ակտի հետևանքով:

Այն դեպքում, յերբ ըստ դատարանի բեկանված դատավճռի գործը յենթակա չէ կարճման, այլ պետք է նորից վերանայվի, վերադաս դատարանը կրկին վերանայելու համար հանձնում է այն համանման կամ միեևույն դատարանին, բայց դատավորների տարբեր կազմով: Յեթե գործի դատավճիռը բեկանվել է ընդդատության կանոնների խախտման հետևանքով, ապա այն պետք է հանձնվի այն դատարանին, վորին նա ընդդատյա յե: Յերկրորդ անգամ դատավորների այլ կազմով քննության ատենելու համար գործի պարտադիր հանձնումը սահմանված է՝ գործի նոր քննության ժամանակ մաքսիմալ անաչառության հասնելու նկատառումով: Գործի հանձնումը միեևույն դատարանին հնարավոր է միայն այն դեպքում, յեթե դատարանում վոչ թե մեկ, այլ միքանի կազմ կա դատավորների:

Սակայն հնարավոր են դեպքեր, յերբ դատավճիռ կայացնելու ժամանակ դատարանի կողմից թույլ տրված անճշտություններ պարզելու դեպքում ևս վերադաս դատարանը դատավճիռը թողնի ուժի մեջ:

Այսպես, այն դեպքում, յերբ դատարանը դատավճիռ է կայացրել իրեն վոչ ընդդատյա գործով, բայց դատավճիռը ինքնըստինքյան կասկած չի առաջացնում ըստ էյության նրա ճշտության մեջ և դատարանը չի անցել պատիժ կիրառելու համար նրան վերապահված իրավունքների սահմաններից, վերադաս դատարանը սահմանափակվում է ստորագաս դատարանի կողմից թույլ տրված անճշտության մասին ցուցում տալով միայն:

Այն դեպքում, յերբ դատարանը որևնքի սխալ կիրառում է թույլ տվել դատարանի դատավճռով պարզված գործի հանգամանքների նկատմամբ, կամ այնպիսի պատիժ է նշանակել, վորը ակնհայտ կերպով չի համապատասխանում դատապարտյալի կատարած հանցագործությանը, վերադաս դատարանը կարող է, առանց գործը նոր քննության հանձնելու, անհրաժեշտ փոփոխություններ մտցնել դատա-

վճուի մեջ: Բայց դրա հետ միաժամանակ, վերադաս դատարանի կողմից նշանակվող պատվոթը չպետք է գերազանցի դատավճուով նշանակված պատվոթը և չպետք է մեղմանա՝ իջնելով քրեական որեւորքի համապատասխան հոգվածով նախատեսված պատժաչափի ցածրագույն սահմանից:

Բացի դրանից, վերադաս դատարանը իրավունք ունի, առանց գործը նոր քննութեան հանձնելու, կրճատելու կամ մեղմացնելու պատվոթը ամենատիպի համապատասխան ահո կիրառելու կարգով, յեթե այն չի կիրառվել, կամ սխալ է կիրառվել:

Ի՞նչպէս պետք է վերաբերվի վերադաս դատարանը, յեթե նա պարզի՝ առաջին ատյանի դատարանի կողմից պայմանական դատապարտութեան, կամ տվյալ հանցագործութեան համար քրեական որեւորքի համապատասխան հոգվածով սահմանված քրեական պատժի միջոցների ցածրագույնից ել ցածրը սխալ կիրառելու դեպքեր:

Այդ դեպքերում, ինչպէս պարզարանել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1934 թ. դեկտեմբերի 25-ի № 49 պլենումը, վերադաս դատարանը իրավագոր չէ պայմանական դատապարտութեանը անմիջականորեն փոխարինելու փոչպայմանականով կամ բարձրացնելու քրեական պատժի միջոցը: Նա պետք է դատավճիւրը բեկանի և գործը հանձնի նոր քննութեան առաջին ատյանի դատարանին այլ կողմով:

գ) Գործի քննարկման ռեվիզիոն կարգը

Միջանի մեղադրյալներ ունեցող գործերով սովորաբար դատավճիւրը բողոքարկում են դատապարտյալներից միայն միջանիսը, բողոք արվում է նաև միջանի դատապարտյալների կամ դատարանով արգարացվածների նկատմամբ, իսկ ի՞նչպէս պետք է վերաբերվի վերադաս դատարանն այն անձնավորութեանների նկատմամբ, վորոնք դատավճիւրը չեն գանգատարկել, կամ վորոնց վերաբերյալ դատավճիւրը չի բողոքարկվել:

Գործող քրեական-դատավարական որեւորքերը պարտավորեցնում են վերադաս դատարաններին գանգատների և բողոքի հիման վրա գործեր վերանայելիս գործը քննութեան առնել վոչ միայն գանգատ տված անձերի կամ նրանց

նկատմամբ, վորոնց վերաբերում է բողոքը, այլ ամեն անգամ ստուգել գործի ամբողջ վարույթը ռեվիզիոն կարգով: Հետևապէս գործի քննութեան ժամանակ վերադաս դատարանը պետք է ստուգի այն լրիվ չափով գործով յեղած բոլոր մեղադրյալների նկատմամբ: Յեւ յեթե դատավճիւրը վերացնելու համար հիմքեր կլինեն նաև դատավճիւրը չգանգատարկողների նկատմամբ, վերադաս դատարանը պետք է բեկանի դատարանի դատավճիւրը նաև նրանց նկատմամբ:

Դատավճուի այդպիսի վերացում կատարվում է այն դեպքերում, յերբ դատարանի դատավճիւրը կայացվել է դատարանի վոչ ճիշտ կազմի կողմից, յերբ խորհրդակցութեան և դատավճուի ձևակերպման ժամանակ խորհրդակցական սենյակում ներկա յեն գտնվել սրահետի դատավորները կամ դատարանի քարտուղարը, կամ այլ անձնավորութեաններ, վորոնք տվյալ գործը քննութեան առնող դատարանի կազմի մեջ չեն մտնում, յերբ դատարանը մեղադրական դատավճիւր է կայացրել այնպիսի արարքի համար, վորն իր մեջ հանցակազմ չի պարունակում, յերբ դատարանը չի կարճել գործը, չնայած կարճման առիթներ են յեղել:

ը) Դատարանի գործողութեանը կողմի գանգատին կամ բողոքից հրաժարվելու դեպքում

Հնարավոր են դեպքեր, յերբ դատարանի դատավճուի դեմ գանգատներ կամ բողոք բերող կողմերը հրաժարվում են նրանցից, այսինքն՝ վերադաս դատարանին դիմում են տալիս այն մասին, վոր նրանք իրենց տված գանգատները կամ բողոքը հետ են վերցնում:

Այս դեպքում ի՞նչպէս պետք է վարվի վերադաս դատարանը:

Յեթե այդպիսի դիմումներ տրված են տվյալ գործով յեղած գանգատների կամ բողոքի տակ ստորագրող բոլոր անձնավորութեանների կողմից, ապա այն հիմքը, վորի հիման վրա գործը մտել է վերադաս դատարան քննութեան անձնվելու համար, պետք է համարել վերացած և գործը յենթակա յե վերադարձման ստորագաս դատարանին՝ դատարանի դատավճիւրը ի կատար անելու համար:

Իսկ յեթե գործի վերաբերմամբ գանգատներ են տրվել

միջանի անձնավորութիւններով կամ գանգատները հետ միասին նաև բողոք և տրված, իսկ գանգատները հետ վերցնելու մասին դիմում բոլորից չի ստացվել կամ դատախազի կողմից բողոքը հետ չի վերցվել, գործը պետք է քննութեան առնվի վերագրանի կողմից: Ընդվորում, դատավճիռը չգանգատարկող կամ գանգատները հետ վերցնող անձնավորութիւնների նկատմամբ գործը պետք է քննութեան առնվի դատարանի կողմից օկվիլիոն կարգով:

բ) Գործի վերաբերմամբ վերադաս դատարանի վորոշումը

Գործի վերաբերմամբ վերագրանի վորոշումը, ինչպես և դատավճիռը, կայացվում է դատարանի լրիվ կազմով, խորհրդակցական սենյակում, գործը դատական նիստում լավելուց անմիջապես հետո: Վորոշումը պետք է ստորագրվի դատարանի սամբողջ կազմի կողմից և հրատարակվի դատական նիստում:

Մինչև վերջին ժամանակներս միջանի դատարանների պրակտիկայում նկատվում էլին ծայրահեղ պարզեցման յերեվոյթներ, վոր արտահայտվում էր նրանում, վոր վերագրանի դատարանները գանգատները և բողոքները հիման վրա ստացված գործերը քննութեան էլին առնում «պաշկաներով», առանց ամեն մի գործով անհարկ վորոշում կայացնելու և այն հրատարակելու ներկա յեղող կողմերին: Կողմերի ներկայանալու դեպքում բավականանում էլին միայն նրանց հայտարարելով այն մասին, վոր դատարանի դատավճիռը թողնվել է օկի մեջ, կամ այս-ինչ դատապարտյալի նկատմամբ յեղած պատժի ժամանակամիջոցը կրճատվել է, կամ գործը հանձնվում է նոր քննութեան և այլն:

Այդպիսի պարզեցման հետևանքով վերագրանիները աշխատանքներում տեղի էլին ունենում այնպիսի փաստեր, յերբ կողմերին դատարանի մեկ վճիռ էր հայտարարվում, իսկ յերկրորդ օրը, կամ նույնիսկ միջանի օր հետո դատարանի գրված վորոշման մեջ այլ վճիռ էր ցույց տրվում:

Վերագրանի դատարանը գանգատի կամ բողոքի հիման վրա վերանայելով գործը, վորոշում է կայացնում՝ 1) դա-

տավճիռը օկի մեջ թողնելու մասին, 2) դատավճիռը բեկանելու և գործը նոր քննութեան կամ լրացուցիչ քննութեան հանձնելու մասին, 3) դատավճիռը բեկանելու և գործը կարճելու մասին և 4) դատավճիռը փոփոխելու մասին:

Վորոշումը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝ գործը քննող դատարանի անունը, գործի քննութեան ժամանակը, գործը քննող դատարանի կազմը, ո՞ւմ գանգատի կամ բողոքի հիման վրա յե քննութեան առնվել գործը, վոր դատարանի կողմից և յե՞րբ է կայացվել դատավճիռը, հատկապես ո՞վ (ազգանուն, անուն, հայրանուն), Քրեական օրենսգրքի վոր հոդվածով, ի՞նչ պատժի և ի՞նչ ժամանակով է դատապարտվել, ինչպիսի՞ և ո՞ւմ նկատմամբ են լրացուցիչ միջոցներ կիրառվել, գործով յեղած մեղադրելու յերկից ո՞վ է արդարացել:

Դատավճիռը բեկանման դեպքում վորոշումն իր մեջ պետք է պարունակի օրենքի այն հոդվածների նշումը, վորոնք խախտված են համարվել, և ցուցում այն մասին, թե հատկապես ինչո՞ւմ է արտահայտվել խախտումը և ինչո՞ւ յե նա էլական համարվել:

Դատավճիռը նրա բացահայտ անարդարութեան շարժանիքներով բեկանվելու դեպքում վորոշման մեջ պետք է ցուցում պարունակի այն հիմունքների մասին, վորոնց հիման վրա դատարանը գտել է, վոր դատավճիռը բացահայտօրեն անարդարացի յե:

Բացի դրանից, վերագրանի դատարանը բեկանելով դատավճիռը և գործը նոր քննութեան ուղարկելով, վորոշման մեջ պետք է ցույց տա, թե նոր քննութեանը վոր ստադիայից պետք է սկսվի:

Վերագրանի դատարանը կարող է առաջարկել գործի նոր վարույթը սկսել՝ 1) նախաքննութեան ստադիայից, յերբ պարզված է, վոր ինչպես նախաքննութեան, նույնպես և դատաքննութեան ժամանակ չպարզարանված են մնացել այնպիսի հանգամանքներ, վորոնք պետք է վոր ազդելին դատարանի դատավճիռի վրա, 2) դատի հանձնելու մոմենտից, յերբ թույլ է արվել կողմերի իրավունքների անտեսում՝ դատական նիստի նախապարտապարտելու գործողու-

թյունները շրջանում, 3) մնացած ղեպքերում դատաքննության սկզբից:

Այս ամենից բխում է, վոր դանդատի կամ բողոքի վերաբերյալ վերադաս դատարանի կայացրած վորոշումը պետք է պատճառաբանված լինի: Նա պետք է պատճառաբանված լինի նաև այն ղեպքում, յերբ դատարանի դատավճիռը թողնել է ուժի մեջ: Պետք է կտրականապես վերջ տրվի այնպիսի վորոշումներ կայացնելու պրակտիկային, վորոնց մեջ կամ բողոքովին վոչ մի պատճառաբանություն չի պարունակվում և վորոշումը սահմանափակվում է «դատարանի դատավճիռը թողնել ուժի մեջ, դանդատը (բողոքը)՝ առանց հետևանքի» Ֆորմուլայով, կամ պատճառաբանություն փոխարեն ուղղակի ավելացնում են «չհիմնավորվածութան պատճառով» բառերը: Անգամ դատավճիռն ուժի մեջ թողնելու ղեպքում ևս դատարանի վորոշման մեջ պետք է շարադրվեն այն փաստարկումները, վորոնք բերվել են ի հիմնավորումն դանդատի կամ բողոքի, և այդ փաստարկումներից ամեն մեկի համար պետք է ցույց տրվի, թե ինչու վերադաս դատարանը համարում է այն չհիմնավորված:

ժ) Դատարանի մասնավոր վորոշումը

Վերադաս դատարանը, քննության առնիվ գործով բացի ընդհանուր վորոշում կայացնելուց, իրավադոր և կայացնելու նաև այսպես կոչված մասնավոր վորոշում:

Յերկար ժամանակ գոյություն ուներ այն կարծիքը, վոր վերադաս դատարանի ակտիվությունը վորոշվում է նրա կողմից կայացված մասնավոր վորոշումների քանակությունով: Այդպիսի սխալ հայացքի առկայությունը պայմաններում այդ վորոշումների քանակը բարձրացնելու տրամադրություն հետապնդում էր տեղի ունենում, իսկ դա հանգում էր նրան, վոր մասնավոր վորոշումների մեջ սկսեցին մտցնել նաև այնպիսի հարցեր, վորոնք պատասխան պետք է գտնեյին հիմնական վորոշման մեջ, որինակ՝ դատարանի կողմից թույլ տրված պրոցեսուալ խախտումների, վկաներ հրավիրելու միջնորդություն սխալ մերժման, կող-

մերի միջնորդությունների չպատճառաբանված մերժման և այլնի վերաբերյալ հարցեր:

Այդպիսի պրակտիկան ակնհայտ կերպով սխալ էր, քանի վոր նա խեղաթյուրում էր մասնավոր վորոշումների բնույթը:

Մասնավոր վորոշումները հետապնդում են այլ նպատակներ: Նրանք նպատակ ունեն՝ կամ ստորադաս դատարանի ուշադրությունը հրավիրել նրա աշխատանքում հաճախ հանդիպող այս կամ այն սխալի վրա, կամ ահագանգել հասարակական կամ պետական կազմակերպություններին այս կամ այն միջոցները ձեռք առնելու անհրաժեշտություն մասին, կանխելու համար սովյալ գործով քննության առնված հանցադործությունների նման թարաքները:

ի) Գործի առաջնավոր դատավինձ կայացնող դատարանին

Գործը քննության առնելուց հետո վերադաս դատարանը իսկական վորոշումը պետք է կցի գործին, իսկ իր մոտ թողնի դատավճիռ պատճենը և վորոշման պատճենը: Յեթե դատապարտյալը կալանքի տակ է և վերադաս դատարանը վորոշում է կայացրել դատավճիռը բեկանելու և գործը կարճելու մասին, նա պետք է անհապաղ վորոշման յերկու վավերացված պատճեններ ուղարկի կալանավայրին՝ մեղադրյալին և կալանավայրի վարչությունը հանձնելու և մեղադրյալին կալանքից ազատելու համար: Վորոշման պատճենը կալանավայրին է ուղարկվում նաև այն ղեպքում, յերբ դատավճիռը բեկանվում և գործը նոր քննության է հանձնվում: Համենայն ղեպս գործը, վոչ ուշ քան նրա քննելու հետևյալ օրը, իսկական վորոշման հետ միասին, յենթակա յե առաքման ստորադաս դատարանին՝ կատարման համար:

Յեթե գործը նոր քննության է հանձնվում, ապա վերադաս դատարանն ամբողջ գործը հանձնում է այն դատարանին, վորը պետք է քննության առնի գործը, իսկ գործն առաջ քննող դատարանին ուղարկում է միայն վորոշման պատճենը, հաղորդելով նրան՝ յե՞րբ և վո՞ր դատարանին է հանձնվել գործը: Գործն այլ դատարանի հանձնելու մասին պետք է իրազեկ պահվեն նաև առաջին ատյանի դատարանի դատական նիստին մասնակցած կողմերը:

1) Մտորադաս դատարանի գործողութիւնները՝ գործը վերադաս դատարանից ստանալուց ետոս

Մտորադաս դատարանը, ստանալով գործը դատաւճիռը բեկանելու մասին վերադաս դատարանի վորոշման հետ միասին, պարտավոր է գործի նոր քննութիւնն սկսել այն ստադիայից, վորը նշված է վորոշման մէջ:

Գործի յերկրորդ անգամ քննվելու ժամանակ, վորի սկզբնական դատաւճիռը բեկանված է յեղել դատապարտյալի դանդատի մէջ բերված շարժառիթներով, դատապարտյալի նկատմամբ չի կարող նշանակվել առավել ծանր պատիժ, քան յայն պատիժը, վորը նշանակված է յեղել գործի առաջին քննութիւն ժամանակ:

Հետևապես, գործի յերկրորդ քննութիւն ժամանակ պատժաչափի բարձրացում հնարավոր է միայն այն դեպքում, յերբ դատաւճիռը բեկանվել է վոր թէ դատապարտյալի դանդատի հիման վրա, այլ դատախազի բողոքի հիման վրա:

Վերադաս դատարանի կողմից բեկանված դատաւճիռի վերաբերյալ վորոշման մէջ տրված ցուցումները պարտադիր են համարվում ստորադաս դատարանի համար և յենթակա յին անշեղ կատարման: Այդ ցուցումները կարող են դանդատարկվել միայն հսկողութիւն կարգով, վորի մասին կխոսվի ստորև:

10. ՄԱՍՆԱՎՈՐ ԳԱՆՎԱՏՆԵՐ ՅԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Բացի դատաւճիռների դեմ դանդատներ և բողոքներ տալուց, կողմերը կարող են դանդատներ և բողոքներ բերել նաև դատարանի առանձին վորոշումների և կարգադրութիւնների դեմ, վորոնք կայացվում են ինչպես դատի հանձնելու ստադիայում, այնպես էլ դատական քննութիւն ժամանակ:

Այդ դանդատները և բողոքները կոչվում են մասնավոր դանդատներ և բողոքներ և հանձնվում են նույնպես վերադաս դատարանին: Այդպիսի դանդատներ կամ բողոքներ տայն ինքնըստինքյան չի կասեցնում դանդատարկվող վորոշման գործողութիւնը: Այդպիսի կասեցման համար պա-

հանջվում է ստորադաս դատարանի հատուկ վորոշումը:

Ժողովրդական դատարանի վորոշումների կամ ժողովրդական դատաւճիռի կարգադրութիւնների դեմ յեղած մասնավոր դանդատները և բողոքները քննութիւն են առնուվում միեւնոյն դատաւորների կողմից, վորոնք քննում են բեկման դանդատները, դատական նիստում, առանց կողմերին հրավիրելու, բայց վերջիններին, յեթէ ներկայացել են դատական նիստին, պէտք է թույլ տրվի բացատրութիւններ տալու: Մասնավոր դանդատի կամ բողոքի քննութիւն որվա մասին կողմերը իրազեկ են արվում մեկ շաբաթ առաջ գործերի ցուցակները կախելու միջոցով:

Գործի քննարկումը, ինչպես սովորաբար, սկսվում է դատաւորներից մեկի ղեկուցմամբ, վորից հետո կողմերը, յեթէ նրանք ներկա յեն դանդատում, տալիս են իրենց բացատրութիւնները, ընդվորում առաջին խոսքը տրվում է դանդատ տվող կողմին: Այնուհետև դատարանը վորոշում է կայացնում մասնավոր դանդատն անհետևանք թողնելու կամ ժողովրդական դատարանի դանդատարկված վորոշումը բեկանելու մասին:

Դատարանը մասնավոր դանդատները քննութիւն է առնում միայն այն անձնավորութիւնների նկատմամբ, ում կողմից բերվել են այդպիսիները:

Ինչ վերաբերում է յերկրամասային (մարզային) դատարանների և ինքնավար հանրապետութիւնների Գերագույն դատարանների վորոշումների վերաբերմամբ յեղած մասնավոր դանդատներին և բողոքներին, ապա նրանք իՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների դատարանակազմութիւն մասին որեւքի համաձայն, յենթակա յեն վերադաս դատարանի քննութիւն:

Այդ միեւնոյն դատարաններում (բայց տնորինական նիստում դատաւորների այլ կազմով) մասնավոր դանդատները և բողոքները քննելու մասին միութենական հանրապետութիւնների քրեական-դատաւարական որեւորքերում յեղած ցուցումները իՍՀՄ Դատարանակազմութիւն մասին որեւքի ընդունումով պէտք է համարել վերացված:

Յերկրամասային (մարզային) դատարանների և ինքնավար հանրապետութիւնների Գերագույն դատարանների վորո-

չումների վերաբերյալ մասնավոր գանդատները, խՍՀՄ, միութենական և լատինոստ հանրապետությունների Դատարանակազմության մասին որենքի համաձայն քննություն են առնվում միութենական հանրապետության Գերագույն դատարանի կողմից:

II. ԳԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Դատավճիռների կատարումն զանգատարկումն այն նորմալ կարգն է հանդիսանում, ուր մեր որենքը գործին մասնակցող կողմերին հնարավորություն է տալիս իրականացնելու իրենց իրավունքները՝ գանդատարկելու դատարանի գործողությունները: Դատավճիռը հաստատվելուց հետո, ինչպես ընդունված է ասել, մտնում է որինական ուժի մեջ, պարտադիր է դառնում բոլոր անձերի և հիմնարկությունների համար: Այդպիսի դատավճիռն ի կատար է ածվում, և դատապարտյալն սկսում է կրել իրեն պատիժը:

Սակայն, կարող են սրատահել այնպիսի դեպքեր, յերբ որինական ուժի մեջ մտած դատավճիռն այնպիսի թերություններ ունի, վորոնք զրկում են նրան այն ապացուցողական ուժից, վորն որենքով պահանջվում է դատավճիռից: Այդպիսի դատավճիռն ուժի մեջ թողնելը կհակասեր սոցիալիստական արդարագատություն հիմունքներին, վորի խնդիրն է պայքարել իսկական հանցագործների դեմ: Չնական վորեւ սահմանափակումներ չեն կարող խոչընդոտ հանդիսանալ այն բանին, վորպեսզի անմեղ մարդը պատիժ կրի միայն նրա համար, վոր առաջին և յերկրորդ ատյանի դատավորները թույլ են տվել սխալներ:

Որինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու համար խորհրդային քրեական նրոցեսը հատուկ սրոցեսուալ կարգ է սահմանում՝ «բողոքարկում հսկողության կարգով»:

Հետևապես բողոքարկման տվյալ տեսակի գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր նա կի-

րարկելի է միայն այնպիսի դատավճիռների նկատմամբ, վորոնք արդեն որինական ուժի մեջ են մտել:

2. ԳԱՏԱՎՃԻՌՆԵՐԸ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այդ առանձնահատկությունները կայանում են հետևյալում.

ա) դատապարտյալի կողմից որինական ուժի մեջ մտած դատավճիռի դեմ գանդատ տալը դեռ չի հետեցնում գործի պարտադիր պահանջում և վերանայում, ինչպես այդ տեղի է ունենում կատարումն զանգատարկման ժամանակ:

բ) քանի վոր խՍՀՄ, միութենական և լատինոստ հանրապետությունների դատարանակազմության մասին որենքի համաձայն գործերը հսկողության կարգով նայելու կարգը համարվում է բացառիկ կարգ, ուստի միութենական հանրապետության տերիտորիայի վրա որինական ուժի մեջ մտած դատավճիռների դեմ բողոք տալու իրավունքը պատկանում է միայն միութենական հանրապետության Գերագույն դատարանի նախագահին և միութենական հանրապետության դատախազին: խՍՀ Միության տերիտորիայի վրա ամեն մի դատարանի կողմից կայացված դատավճիռների դեմ՝ խՍՀ Միության Գերագույն դատարանի նախագահին և խՍՀ Միության դատախազին:

3. ԳՈՐԾԵՐԸ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԵՐԱՆԱՅՈՂ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Դատավճիռների և վորոշումների դեմ հսկողության կարգով բերված բողոքները քննության են առնվում միութենական հանրապետությունների Գերագույն դատարանների և խՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիաների կողմից:

Միութենական հանրապետությունների Գերագույն դատարանների կազմում առաջներում գոյություն ունեցած նախագահությունները և պլենումները, վորոնք հսկողության կարգով գործեր էյին վերանայում, այդ թվում և հենց միութենական հանրապետության իրեն իսկ Գերագույն դատարանի դատական կոլեգիաների կողմից քննված

գործերը—նախ նախագահութիւնում, ապա նաև պլենումում, ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների դատարանակազմութեան մասին որեւքի ընդունվելու հետ—վերացված են: Գրանով իսկ վերացված են հրահոգութեան կարգով գործեր վերանայելու իրավունք ունեցող մեծ քանակութեամբ ինստանցիաները, վորով զգալի չափով ամբարանդվում և դատական դատավճռի նշանակութիւնը և կրճատվում և քաշքշուկը:

4. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Միութենական հանրապետութիւնների գործող քրեական—դատավարական որեւսգրքերը հսկողական գործերի քննութեան հատուկ կարգ չեն սահմանում գերագույն դատարանների դատական կոլեգիաներում:

Գործի քննութիւնը կատարվում և դատական դռնբաց նիստում և սկսվում և գործով բողոք մտցնող անձի կամ նրա ներկայացուցչի գեկուցումով: Գործի վերաբերյալ վորոշումը կայացվում և գործի քննութեանը մասնակցող դատավորների կազմի կողմից: Դատարանի վորոշումը պատճառարանված պետք և լինի և ստորագրված դատարանի ամբողջ կազմի կողմից:

Որինական ուժի մեջ մտած դատավճիռների, վորոնցով կայացվել և միութենական հանրապետութեան Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի վորոշումը, ինչպես նաև միութենական հանրապետութիւնների գերագույն դատարանների դատավճիռների դեմ տրված բողոքներով յեղած գործերը քննութեան են առնվում ԽՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայում այն միեւնույն կարգով, վորը սահմանված և այդ գործերի քննութեան համար՝ միութենական հանրապետութիւնների Գերագույն դատարանների դատական կոլեգիաներում:

Ինչ վերաբերում և ԽՍՀՄ Գերագույն դատարանի բոլոր կոլեգիաների որինական ուժի մեջ մտած դատավճիռների և վորոշումների դեմ բերված բողոքներով յեղած գործերի վերանայմանը, ապա ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ

հանրապետութիւնների Դատարանակազմութեան մասին Որեւքի 75 հոդվածը նախատեսում և հետեյալը.

«ԽՍՀՄ Գերագույն դատարանի կոլեգիաների դատավճիռների, վճիռների և վորոշումների դեմ ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահի կամ ԽՍՀՄ դատախազի կողմից ստացվող բողոքները քննարկելու համար հրավիրվում և ԽՍՀՄ Գերագույն դատարանի Պլենում, վորը ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից քննարկված դատական գործերի առթիվ ընդունված վճիռների հիման վրա նույնպես դեկավար ցուցումներ և տալիս դատական պրակտիկայի հարցերի վերաբերյալ»:

ԽՍՀ Միութեան Գերագույն դատարանի կոլեգիաների կողմից կայացված դատավճիռների և վորոշումների վերաբերյալ գործերի քննարկումը, համաձայն ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների դատարանակազմութեան մասին որեւքի, կատարվում և Գերագույն դատարանի պլենումի կողմից:

Պլենումը կազմված և ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահից, նրա տեղակալներից և ԽՍՀՄ Գերագույն դատարանի բոլոր անդամներից, ԽՍՀՄ դատախազի և ԽՍՀՄ արդարադատութեան ժողովրդական կոմիտարի պարտադիր մասնակցութեամբ պլենումում: Բողոքների հիման վրա քննարկված գործերով պլենումի վորոշումները կայացվում են պլենումի անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ:

5. ԳՈՐԾԸ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԵՐԱՆՅՈՂ
ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Միութենական հանրապետութիւնների գործող քրեական—դատավարական որեւսգրքերը գործերը հսկողութեան կարգով վերանայող դատարաններին իրավունք են վերապահում՝ վորոշում կայացնելու դատավճիռը բեկանելու և գործը նորից քննութեան նշանակելու, գործի ամբողջ վարույթը բեկանելու և քննութիւնը նախաքննութեան ստացելու, դատավճռի բեկանման և գործի վարույթը կարճելու, դատավճիռն ուժի մեջ թողնելու և հանցանքը այլ հոդվածով վերափոխելու մասին, վորը նախատեսում

է վոչ առաւել ծանր սրտով, քան այն, վորով դատապարտուել է դատապարտյալը, մեղմացնելու պատիժը, բայց վոչ ցածր Քրեական որենսդրքի այն հոդվածով նախատեսված պատիժը, վորով դատապարտուել է դատապարտյալը:

Սակայն, յեթե գործը բեկման կարգով նայելու ժամանակ դատարանն այս կամ այն ձևով մեղմացրել է առաջին ատյանի դատարանի կողմից նշանակած պատիժը, կամ կարճել է գործի վարույթը, ապա այդպիսի վորոշման դեմ տրված բողոքի համաձայն վերանայելով գործը, Գերագույն դատարանը իրավունք չունի վերացնելու կասացիոն վորոշումը և վերականգնելու փոփոխված կամ բեկանված դատավճիռի գործողութունները: Պատիժն իջեցնելու կամ գործը կարճելու մասին կասացիոն վորոշումը սխալ ճանաչվելու դեպքում այդպիսի վորոշումը յենթակա յե բեկանման և գործը հանձնվելու յե նոր քննության այն նույն դատարանին, վորը քննարկել է գործը կասացիոն կարգով, բայց տարբեր կազմով:

Գործը հսկողության կարգով նայելու ժամանակ Գերագույն դատարանը իրավունք չունի անմիջականորեն խրատացնելու պատիժը: Այն դեպքերում, յերբ դատավճռով նշանակված պատիժը նա գտնում է անհամապատասխան հանցագործի և նրա կատարած հանցագործության վտանգավորության աստիճանին, դատավճիռը բեկանում և գործը հանձնում է նոր քննության:

III. ԳՈՐԾԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ ՆՈՐ ՅԵՐԵՎԱՆ ՅԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Դատավճիռը որինական ուժ ստացած գործի վերանայման համար խորհրդային որենքը մի հիմք ևս գիտի. դա գործի վերանայումն է այն դեպքում, յերբ նոր հանգամանքներ են յերևան յեկել, վորոնք հայտնի չեն յեղել դատարանին գործի քննության ժամանակ:

1. ԳՈՐԾԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Միութենական հանրապետութունների Քրեական-դատաւարական որենսդրքերը գործի նորոգման համար նախատեսում են հետևյալ հիմքերը.

1) այն ապացույցների կեղծ լինելու պարզումը, վորոնց վրա հիմնված է դատավճիռը.

2) վճիռ արձակող դատավորների կողմից հանցավոր չարարկութունները.

3) բոլոր այլ տեսակի հանգամանքները, վորոնք ինքնին կամ մինչ այդ պարզված հանգամանքների հետ միասին ապացուցում են դատապարտյալի անմեղութունը կամ նրա մասնակցութունն այլևի թեթև կամ այլևի ծանր հանցագործության, քան այն, վորի համար դատապարտվել է նա: Նոր համարվում են միայն այնպիսի հանգամանքները, վորոնք չեն կարող հայտնի լինել դատարանին դատավճիռը կայացնելու սրահին:

Նոր յերևան յեկած հանգամանքների հետևանքով գործի նորոգում մեր պրակտիկայում հանդիպում է չափազանց քիչ: Այդ հանգամանքը ինքնին հասկանալի յե, քանի վոր այն պայմանները, վորոնք հնարավորութուն են տալիս այդ հիմունքներով գործերի վերանայման, նույնպես կարող են միայն յեզակի բացառութուններ լինել:

Միքիչ մանրամասն կանգ առնենք գործի նորոգման վերը հիշված հիմունքների վրա:

Ի՞նչ պիտք է նրառի ունենալ, ապացույցները կեղծ լինելու առիթով, գործը վերանորոգելու հարցը լուծելու ժամանակ:

Ապացույցների կեղծութուն ստեղծվում է՝ նրանց դիտավորյալ խեղաթյուրումով, արհեստական ապացույցներ ստեղծելով, սուտ վկայությամբ, փորձագետի կողմից կեղծ յեզրակացութուն տալով, փաստաթղթերի կեղծումով, իրեղեն ապացույցների փչացումով, փաստաթղթի կամ ցուցմունքի սխալ թարգմանությամբ և այլն և այլն:

Սակայն ապացույցների կեղծության պարզումը դեռ ևս հիմք չի կարող ծառայել նոր յերևան յեկած հանգամանքների հետևանքով գործի պարտադիր նորոգման համար: Անհրաժեշտ է, վոր ճիշտ կերպով պարզված լինի, վոր հատկապես այդ կեղծ ապացույցներն են ընկած յեղել դատավճիռի հիմքում: Հնարավոր է, վոր գործով թույլ տրված լինի փաստաթղթի կամ ցուցմունքի սխալ թարգմանություն:

նություն, սակայն ամբողջ նյութը իմի վերցրած ակնհայտ է դառնում, վոր այդ հանդամանքը, դատավճիռ կայացվելու վրա վոչ մի աղբյուրություն չի ունեցել:

Գատավորների հանցավոր չարարիւթյուններ ասելով պետք է հասկանալ հատկապես տվյալ կոնկրետ գործով նրանց ցուցաբերած չարարկությունները: Դա կարող է արտահայտվել այնպիսի վիճակներ կանչելը մերժելու մեջ, վորոնք կարող էլին, դատավորի համար ակնհայտ կերպով, վճռական ցուցմունքներ տալ տվյալ գործով, դատական նիստի արձանագրություն մեջ կեղծ գրանցումներ կատարելու և այլնի մեջ:

Սակայն ասպացույցների կեղծ լինելու մասին, վորոնց վրա հիմնված է դատավճիռը, կամ վճիռ կայացնող դատավորների չարարիւթյունների մասին միայն շահագրգռված անձնավորությունների հայտարարությունները բավական չեն: Միայն այդպիսի հայտարարությունների հիման վրա գործեր նորոգելը հնարավորություն կտար շահագրգռված անձնավորություններին՝ գործադրել այդ առիթները դատարանի որինական ուժի մեջ մտած դատավճիռը վերանայելու համար ճանապարհներ վորոնելու ուղղությամբ: Այդ իսկ նկատառումով միութենական հանրապետությունների քրեական-դատավարական որենսգրքերը միանգամայն արդարացի կերպով նախապայման են դնում, վորպեսզի այդ նոր հանգամանքները պարզվեն դատարանի՝ որինական ուժ ստացած՝ մի այլ դատավճռով:

Ի՞նչ է հասկացվում նոր հանգամանքներ, վորոնք դատարանին հայտնի լինել չեյին կարող վճիռ կայացնելու պահին հասկացողության տակ, վորոնք նույնպես գործի նորոգման համար հիմք են հանդիսանում:

Յեթե դատարանը, քննության առնելով գործը իրեն հայտնի հանցավոր փաստերի հիման վրա, նրանք սխալ է վորակել, որինակ՝ հակահեղափոխական ագիտացիան վորակել է վորպես խուլիգանություն, ասպ այդ հանգամանքը չի կարող գործը նոր յերեան յեկած հանգամանքների առիթով նորոգելու հիմք ծառայել: Այստեղ վոչ մի նոր հանգամանքներ չկան և այս դեպքում հիմք կա միայն գործը հսկողության կարգով վերանայելու համար:

Նոր հանգամանքների շարքին են դասվում միայն այնպիսիները, վորոնք չեն յեղել և չեյին կարող հայտնի լինել վճիռ կայացնող դատարանին, որինակ՝ պարզումն այնպիսի հանգամանքի, վոր այն մարդը, վորի սպանություն համար դատապարտվել է մեկ ուրիշը, կենդանի յե:

2. ԳՈՐԾԸ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՆԳԱՏՆԵՐ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Այն գործերի նորոգումը, վորոնցով արդարացման դատավճիռ է կայացվել, ըստ միութենական հանրապետությունների քրեական-դատավարական որենսգրքերի, թույլ է տրվում միայն մեկ տարվա ընթացքում՝ հաշված նոր հանգամանքները յերեան գալու օրից և բոլոր դեպքերում՝ վոչ ուշ քան հինգ տարվա ընթացքում դատավճիռը որինական ուժի մեջ մտնելու օրից:

Մյուս դատավճիռների նկատմամբ, գործը նորոգելու համար, որենքով վոչ մի ժամկետ չի սահմանված:

3. ԳՈՐԾԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՈՒՅՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն գործերի վերաբերմամբ, վորոնցով արդարացման դատավճիռ է կայացվել, միջնորդություն կարող է հարուցել միայն դատախազությունը: Այսպիսի սահմանափակումը կատարելապես պարզ է, քանի վոր, միայն պետություն անունից դատավճռի որինականության վրա հսկողություն իրականացնող դատախազը կարող է լուծել այն հարցը, թե տվյալներ կա՞ն արդյոք արդարացման դատավճիռ ունեցող գործի նորոգման մասին միջնորդություն հարուցելու համար թե վոչ: Այդպիսի գործերի նորոգման համար միջնորդություն հարուցելու իրավունք ունեցող անձանց չըջանալի լայնացումը կհանգեր դատարանի դատավճռի հեղինակության անկմանը, դատավճռի անսասանությունը չհավատարուն և այլն:

Մեղադրական դատավճիռների վերանայման համար, բացի դատախազից, միջնորդություն կարող են հարուցել՝ դատաարարայլը, նրա պաշտպանը, ազգականները և այն

հասարակական կազմակերպութիւնները, ուր յեղել և կամ կա դատապարտյալը:

Որենքը թույլ և տալիս մեղադրական դատաւճիռ ունեցող գործի նորոգում նաև այն դեպքում, յերբ դատաւարտյալը մեռել է: Դա խոչոր նշանակութիւն ունի այն տեսակետից, վոր դատաւճիռ բեկանումը կարող և նշանակութիւն ունենալ դատապարտյալին մոտ կանգնած անձնաւորութիւններէ համար:

4. ԳՈՐԾԵՐԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՐՈՒՅՅԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Նոր յերևան յեկած հանդամանքներէ հետեանքով-գործը նորոգելու մասին միջնորդութիւնները հարուցվում են դատախազի առաջ: Դատախազը քննարկելով միջնորդութիւնը և այն հիմնաւորված գտնելով, անձամբ կամ քննչական մարմիններէ միջոցով քննութիւն և ձեռնարկում միջնորդութիւն մեջ ցույց տրված նոր հանդամանքներէ շուրջը:

Յեթե քննութիւնը հիմք չի տալիս գործը նորոգելու համար, դատախազը կարծում և քննութիւնը, վորի մասին իրազեկ և դարձնում միջնորդութիւն հարուցած անձնաւորութիւն կամ հիմնարկութիւն, իսկ յեթե դատախազը անհրաժեշտ է գտնում գործ հարուցելու, ապա քննութիւն ակտերն իր յեղրակացութիւն և գործի հետ միասին—վորով սխալ դատաւճիռ և կայացված յեղել—ուղարկում և միութենական հանրապետութիւն Գերագույն դատարանին:

5. ԳՈՐԾԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՈՐԾԵՐ ՔՆՆՈՂ ԳԱՏԱՐԱՆԸ

Դատաւճիռներէ բեկանման իրավունքը, նոր յերևան յեկած հանդամանքներէ հետեանքով, պատկանում և միայն միութենական հանրապետութիւններէ գերագույն դատարաններին: Դատաւճիռ բեկանման հարցը լուծվում և քրեական գործերի դատական կոլեգիայում գանգատներէ և բողոքներէ հիման վրա քննվող գործերի քննութիւն ընդհանուր կարգով:

Դատաւճիռ բեկանման դեպքում, միութենական հանրապետութիւն գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան, գործն իր վորոշման հետ միասին նոր քննութիւն և հանձնում նրան ընդդատյա դատարանին: Գործը քննութիւն և առնվում ընդհանուր հիմունքներով: Նոր դատաւճիռ գանգատարկման և բողոքարկման իրավունքը նույնպես վորչնչով չի սահմանափակված:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

միութենական հանրապետությունների Գրեական-դատավարական որենսզորների դատավճիռների գանգատարկմանը և բողոքարկմանը վերաբերող հոդվածների

ՈՒՑՈՒՄ	Ուկր. թՄՀ	Բելուս. թՄՀ	Վրաց. թՄՀ	Ադրբեջ. թՄՀ	Ուզբեկ. թՄՀ	Հայկ. թՄՀ	Տաջիկ. թՄՀ
344—350	335—336 338—339	334—350	344—350	341—347	151	322—328	108—109
373—379	365—370	373—379	373—379	363—369	173—175	341—347	152—154
409—426	342—354	411—426	408—425	ԴԱ. 29	153—159	373—387	111—114 124—126
427—430	357—364	428—430	426—429	429—432	160—164	392—393	129—134
431—433	—	431—433	430—432	—	—	389—390	135
434—444	384	434—443	433—443	—	—	369—372 391—394 395	—
445—447	—	445—447	444—476	—	—	—	—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Գլուխ I.	Դատավճիռների գանգատարկման և բողոքարկման նշանակությունը ըստ խորհրդային քրեական պրոցեսի . . .	3
	1. Դատարանի կողմից սոցիալիստական որինականության ճիշտ պահպանման, որենքի միակերպ ըմբռնողության և կիրառման ստուգումը	5
	2. Դատավճիռի հիմնավորվածության ստուգումը	7
	3. Հսկողության իրականացումը ստորադաս դատարանների կողմից	8
Գլուխ II.	Դատավճիռների գանգատարկման և բողոքարկման ձևերը բուրժուական պրոցեսի մեջ	9
	1. Ապելյացիա (վերադատություն)	9
	2. Կասացիա (վճարակալություն)	11
Գլուխ III.	Դատավճիռների գանգատարկման և բողոքարկման սեփականորեն խորհրդային քրեական պրոցեսի մեջ	13

I. ՎՃՌԱԲԵԿ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄ

1.	Ընդհանուր հասկացողություններ	13
2.	Գանգատարկման վրա յենթակա դատավճիռներ	14
3.	Ո՞ւմ կողմից կարող է գանգատարկվել կամ բողոքարկվել դատավճիռը	14
4.	Վճարակալ գանգատարկման ժամկետները	15
5.	Դատավճիռների պատճենները հանձնելու և գործերը վերադատ դատարանին ուղարկելու ժամկետները	16
6.	Բեկման գանգատներ տալու ժամկետները վերականգնման կարգը	17
7.	Բեկման գանգատներ և բողոքներ տալու կարգը	18
8.	Դատարանի կողմից գանգատները՝ նրա կողմից բեկման գանգատը կամ բողոքը ստանալուց հետո	19
9.	Գանգատների և բողոքների քննությունը վերադատ դատարանում	20
10.	Մասնավոր գանգատներ և բողոքներ	36

II. ԴԱՏԱՎՃԻՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՒԲԱՐԿՈՒՄԸ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

1. Ընդհանուր հասկացողություն	38
2. Դատավճիռները հսկողության կարգով բողոքարկելու առանձնահատկությունները	39
3. Գործերը հսկողության կարգով վերանայող դատարանները	39
4. Գործերի քննության կարգը	40
5. Գործը հսկողության կարգով վերանայող դատարանի իրավունքները	41

III. ԳՈՐԾԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ ՆՈՐ ՅԵՐԵՎԱՆ ՅԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ


1. Գործի նորոգման հիմքերը	42
2. Գործը վերաքննելու մասին դանդատներ տալու ժամկետները	45
3. Գործը նորոգելու մասին միջնորդություններ հարուցելու իրավունք ունեցող անձնավորությունները	45
4. Գործերը նորոգելու մասին միջնորդություններ հարուցելու կարգը	46
5. Գործը նորոգելու մասին միջնորդությունների հիման վրա գործեր քննող դատարանը	46

Թարգմ. Լ. Թարոսյան
 Խմբ. Ս. Մամյան, Ս. Մարտիրոսյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Մրբագրիչ Հ. Դոլոսյանյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

34795

Փյակլիտի լիազոր Վ. 1174
 Պատվեր № 286, արած 1000
 Հանձնվել է արտադրության 29/II 1940 թ.
 Ստորագրվել է ապագրելու 15/V 1940 թ.
 Գինը 90 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
 Յերևան, Ալլահվերդյան № 65



37.291

ԳԻՆԸ 90 ԿՈՊ.

470

М. В. КОЖЕВНИКОВ

ОБЖАЛОВАНИЕ И ОПРОТЕСТОВАНИЕ ПРИГОВОРОВ
ИЗДАНИЕ НАРКОМЮСТА АРМ. ССР

Типография Гос. изд. полнт. литературы, Ереван, Аллавердян № 65.